ՆՊԱՏԱԿ

НПАТАК
Научно-общественная газета

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱՀԱՍԱՐԱԿԱԿԱ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1993 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՑ
ԱՊՐԻԼ, 1994 Թ., ԹԻՎ 7 (26)
ԳԻՆԸ՝ 3 Դ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 50-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի նշանավորումն Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 50-ամյակի, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 50-ամյա հոբելյանի կապակցությամբ 1994 թվականի մայիսի 23-ից 25-ը կազմակերպել հանդիսավոր միջոցառումներ:

2. Ստեղծել հոբելյանական հանձնաժողով հետևյալ կազմով՝

Լևոն ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ— Հայաստանի Հանրապետության նախագահ

Հրանտ ԲԱԳՐԱՏՅԱՆ— Հայաստանի Հանրապետության վարչապետ

Արմենակ ՂԱԶԱՐՅԱՆ— Հայաստանի Հանրապետության պետական նախարար

Վիկտոր ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ— Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր պրեզիդենտ

Ֆադեյ ՍԱՐԳՍՅԱՆ— Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ

Ռաֆայել ՂԱԶԱՐՅԱՆ— Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կրթության և գիտության, լեզվի և մշակույթի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ

Վարդգես ԳՆՈՒՆԻ— Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարար

Հակոբ ՀԱԿՈԲՅԱՆ— Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար

Լավրենտի ԲԱՐՍԵՂՅԱՆ— Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտի ընդհանուր հարցերի գծով տեղակալ:

3. Հանձնաժողովին՝ մեկամսյա ժամկետում հաստատել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 50-ամյա հոբելյանի հետ կապված հանդիսավոր միջոցառումների ծրագիր:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ նախատեսել համապատասխան միջոցներ, հանձնաժողովի կողմից հաստատված ծրագրի իրականացումն ապահովելու համար:

Հայաստանի Հանրապետության նախագահ՝

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

14 ապրիլի 1994 թ.

Հայերի ցեղասպանությունը և ժամանակակից թուրք պատմագրությունը

ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ այլ վայրերում երիտթուրքերի կողմից կազմակերպված հայերի ցեղասպանությունը, որի 79-րդ տարին լրանում է այս օրերին, երբեք չի կարող մոռացվել, քանի դեռ թուրքական իշխանությունները հրապարակավ չեն ընդունել իրենց մեղքը, քանի դեռ խոշոր տերությունները պաշտոնապես չեն ճանաչել ու դատապարտել հայերի ցեղասպանությունը: Այդ ոճրագործությունը, որի զոհերը դարձան ավելի քան մեկ միլիոն ու կես հայեր, և մենք կորցրինք Արևմտյան Հայաստանը, վաղեմության ժամկետ չի կարող ունենալ:

Դեռևս 1918 թվականին Ժակ դե Մորգանը հավատում էր, որ «կգա օրը, երբ այդ հանցագործները— բեռլինյան թե ասիական— ստիպված կլինեն պատասխան տալ իրենց արարքների համար և կհատուցեն կատարած չարագործությունների համար: Անհրաժեշտ է անողոք լինել նման ստոր մարդկանց հանդեպ»:

Այդ կարծիքին էին նաև Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները, որոնք 1915 թ. մայիսի 24-ին հանդես եկան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը դատապարտող համատեղ հայտարարությամբ, համոզմունք հայտնելով, որ Թուրքիայի կառավարության բոլոր անդամները, այն ռազմական գործիչներն ու չինովնիկները, որոնք այդ կոտորածների կազմակերպման մասնակիցներն են, անձնական պատասխանատվություն են կրելու:

Այդ օրը դեռ չի եկել, բայց պետք է հավատալ, որ կգա:

Երիտթուրքերի կառավարությունն արդարացման միջոց ընտրեց բացահայտ կեղծիքը, հայտարարելով, որ «բոլորովին ճիշտ չէ, թե հայ բնակչության կոտորածներ են տեղի ունեցել օսմանյան կայսրության սահմաններում», որ «Անտանտի տերությունների հայտարարությունը մերկ կեղծիք է»: Այս թեզը դարձավ թուրքական պրոպագանդայի և թուրք պատմագիտության ուղենիշը:

Պատերազմի տարիներին մեծ տերություններից և ոչ մեկը գործնական քայլերի չդիմեց կանխելու հայերի ցեղասպանությունը: Ավելին, այդ կոտորածները նրանք օգտագործեցին Ասիական Թուրքիան բաժանելու իրենց նպատակների իրագործման արագացմանը, 1916 թ. կնքելով «Սայքս-Պիկոյի» հայտնի համաձայնագիրը» և մոռացության մատնելով մայիսի 24-ի իրենց իսկ հայտարարությունը և Հայկական հարցը:

Եվրոպական դիվանագիտության համար Հայկական հարցն այս շրջանում կորցրեց իր հրապույրը: Իրադարձությունները ընթացան նախատեսված հունով: Օգտագործելով պատերազմական իրավիճակը, երիտթուրքերը ձեռնամուխ եղան հայերի բնաջնջման իրենց քաղաքականության՝ իրագործմանը, սին պատրանքներ տածելով, որ դրանով իսկ ընդմիշտ վերջ կտրվի Հայկական հարցին:

Մշակվեց հայերի ցեղասպանությունը՝ որպես պետական քաղաքականություն միջազգային հասարակությունից թաքցնելու ստրատեգիական ծրագիր, որի գլխավոր թեզն իրադարձությունների խեղաթյուրումն էր և կոտորածների մեղքը հայերի վրա բարդելը: Այդ քաղաքականության կենտրոնը Թալեաթ փաշան էր, որի ցուցումները սրբությամբ որդեգրել է թուրք պատմագրությունը:

1915 թ. հոկտեմբերի 8-ի թիվ 544 ծածկագիր հեռագրով Թալեաթը հանձնարարում էր տեղական իշխանություններին՝ հայերի ցեղասպանության վերաբերյալ չստեղծել «լեգալ փաստաթղթեր» և հայերին ներկայացնել, որպես պատժի արժանի դավադիրների:

Դա, իհարկե, արդե՛ն կիրառվող քաղաքականություն էր, որի վրա 1915 թ. սեպտեմբերի 9-ին իր ընթերցողների ուշադրությունն էր հրավիրել «Ժուռնալ դե Ժընևը», գրելով, որ երիտթուրքերի կառավարությունը «Աբդուլ Համիդի օրինակով չի խուսափում հիմնվել հնարովի դավադրությունների վրա, որպեսզի արդարացնի իր գործողությունները»:

Անցել են տասնամյակներ, սակայն պանթուրքիզմի գաղափարախոսները անդադրում «փաստեր» են փնտրում այդ հնարովի դավադրությունների վերաբերյալ և Թալեաթ փաշայի 1916 թ. փետրվարի 8-ի հրահանգի համաձայն հրատարակում են փաստաթղթերի ժողովածուներ ու մենագրություններ:

Մեծ աշխուժություն նկատվեց հատկապես վերջին 6—7 տարիների ընթացքում: Լոնդոնում, Անկարայում, Ստամբուլում մեկը մյուսի հետևից հրատարակվեցին «Բրիտիշ դոկումենտս օն Օտտոման Արմենիանզ» («Բրիտանական փաստաթղթերը օսմանյան հայերի մասին») փաստաթղթերի եռահատոր ժողովածուները, «Օտտոման Արքայվս Արմենիան Քուեսչն» («Օսմանյան արխիվներ: Հայկական հարցը») ժողովածուն, Էսեթ Ուրասի «Արմենիանզ ին հիստորի ընդ Արմենիան քուեշշն» («Հայերը պատմության մեջ և Հայկական հարցը»), Ռ. Սալահիի «Օտտոման Արմենիանզ» («Օսմանյան հայերը») և այլ աշխատություններ, որոնցում հրապարակ են հանվում միայն «լեգալ» փաստաթղթերը՝ ի նպաստ թուրք պատմագրության որդեգրած հայեցակետերի:

Նկատելի է թուրք պատմաբանների ձգտումը հրատարակել իրենց աշխատություններն անգլերեն, հետապնդելով միջազգային հասարակայնության կարծիքը թյուրիմացության մեջ գցելու նպատակ: Այս հրատարակություններում խնամքով շրջանցվում են թուրքերի բարբարոսությունը մերկացնող՝ հայերի դեպորտացման՝ բռնագաղթի կոմիտեի քարտուղար Նայիմ-Բեյի հուշերը, որոնք տպագրվել են Լոնդոնում 1920 թ., գեներալ Շերիֆ փաշայի 1915 թ. նամակը «Ժուռնալ դե Ժընևի» խմբագրությանը, գերմանացի Յոհաննես Լեպսիուսի, անգլիացի Առնոլդ Թոյնբիի և այլոց աշխատություններում բերված մերկացնող փաստերը, արաբ Փայեզ Էլ-Խուսեյնի՝ 1917 թ. Բոմբեյում տպագրած հուշերը, «Թուրկչե Ստամբուլ» թերթի 1918 թ. դեկտեմբերի 24-ի համարում տպագրած թուրք բժիշկ Սեյյահեդդինի նամակը, Թուրքիայում օտարերկրյա ներկայացուցիչների զեկույցները, Թալեաթ փաշայի գաղտնի հրահանգները և այլ նյութեր:

Երիտթուրքերին մեծ անհանգստություն էր պատճառում, որ չնայած ձեռնարկած միջոցներին, գաղտնի փաստաթղթերը հայտնի էին դառնում միջազգային հասարակայնությանը: Երբ, օրինակ, հայտնի դարձավ, որ ամերիկյան հյուպատոսները կարողացել են ձեռք բերել նման փաստաթղթեր, Թալեաթը 1915 թ. նոյեմբերի 18-ի և դեկտեմբերի 11-ի ծածկագիր հեռագրերով պահանջեց տեղական իշխանություններից հանդես բերել աչալրջություն և ձերբակալել ու ռազմական իշխանություններին հանձնել այն անձանց, որոնց միջոցով օտարերկրյա ներկայացուցիչներին հայտնի էին դառնում գաղտնի փաստաթղթերը:

Այսօր էլ թուրք պատմաբանները մեծագույն ջանասիրությամբ թաքցնում են բոլոր այն փաստաթղթերը, որոնք մերկացնում են երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը: Էսաթ Ուրասը նրանցից մեկն է, որը պնդում է, թե հայերի զանգվածային տեղահանումներ չեն եղել, որ կառավարությունը ռազմական իշխանություններին իրավունք է վերապահել տեղահանել գյուղերի և քաղաքների հայ բնակիչներին միայն այն դեպքում, եթե դա «ռազմական անհրաժեշտություն» է ներկայացրել (էջ 808):

Հայերի ցեղասպանությունը դիտելով որպես «ռազմական անհրաժեշտություն», նա «ամբողջապես արդարացված» է համարում թուրքական իշխանությունների քաղաքականությունը և սևով սպիտակի վրա գրում, թե՝ «թուրքերը հայերին իրական առիթ չեն տվել ապստամբության համար» (էջ՝ 884, 885): Իսկ Սալահին ցինիկորեն պնդում է, թե՝ Թուրքիայի «Մինիստրների խորհուրդն ստույգ հրահանգներ է արձակել հայերի տեղաշարժերի մասին... Այդ փաստաթղթերից և ոչ մեկում հիշատակություն չկա «կոտորածի» կամ «ցեղասպանության» մասին, Ընդհակառակը նրանցից յուրաքանչյուրում ստույգ հրահանգներ են պարունակվում, որ հայերը ապահով կերպով պետք է հասցվեն նշանակված վայրերը և նրանց հնարավորություն պետք է տրվի նոր օջախներ հիմնելու» (էջ 800):

Մինչդեռ կառավարության՝ Ջեմալ փաշային ուղարկած 1915 թ. նոյեմբերի 18-ի ծածկագրից հայտնի է դառնում, որ Թուրքիայում բնակվող քրիստոնյա տարրերի բնաջնջման վերաբերյալ կառավարության հրահանգը տրված է եղել դեռևս փետրվարի 4-ին: Այս փաստը հաստատվում է «Հալեպի կառավարությանը», 1915 թ. մարտի 9-ին Թալեաթի հղած հեռագրով: «Հայերի բոլոր իրավունքները՝ ապրելու և աշխատելու Թուրքիայի հողում,— ասվում է այնտեղ,— ամբողջովին չեղյալ է հայտարարված և, համապատասխան դրան, կառավարությունն իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել նույնիսկ օրորոցում գտնվող երեխաներին...»:

Թալեաթի 1915 թ. սեպտեմբերի 16-ի ծածկագիրը վկայում է, որ երիտթուրքերի կառավարությունը որոշել էր. «ամբողջությամբ ոչնչացնել Թուրքիայում ապրող հայերին»: Թալեաթը տեղական իշխանություններին զգուշացնում էր, որ «նրանք, ովքեր դեմ են այս հրահանգին ու որոշմանը, չեն կարող մնալ կայսրության պաշտոնական հաստիքներում: Հայերի գոյությանը վերջ պետք է տրվի»:

1915 թ. դեկտեմբերի 17-ի թիվ 762 ծածկագրով Թալեաթը առանձին հայերի փրկության միջոց էր համարում նրանց կողմից քրիստոնեության ուրացումն ու մահմեդականության ընդունումը, ըստ որում այդպիսիները ևս չէին ազատվում իրենց բնակավայրերից աքսորվելուց:

Հայ ընթերցողներին ծանոթ են գիտական շրջանառության մեջ դրված բազմաթիվ այն փաստաթղթերը, որոնք վկայում են, թե ինչպես էին երիտթուրքերը Արևմտյան Հայաստանից բռնագաղթածներին «ապահով կերպով հասցնում նշանակված վայրերը»: Բերենք մեկը ևս՝ դա Հալեպի որբանոցներից մեկում մի անգլիացու՝ 1920 թ. օգոստոսի 5-ի գրառումներն են 1915 թվականին բռնագաղթված և մահմեդականացված մի աղջնակի հետ ունեցած զրույցի մասին: Գրառումներին կցված է աղջնակի արցունքապատ աչքերով լուսանկարը:

Ահա այդ գրառումներից մի հատված, որն ընթերցողի ուշադրությանն է հանձնվում թարգմանաբար.

«— Ինչո՞ւ ես լաց լինում, ո՞վ ես դու, աղջիկս:

— Ես մահմեդական եմ:

— Իսկ որտե՞ղ են քո հայրը, մայրը, եղբայրները:

— Նրանց բոլորին սպանել են, միայն ես եմ մնացել կենդանի:

— Ովքե՞ր են սպանել:

— Հայերը:

— Ո՞վ է քեզ պատմել, թե քո ծնողները սպանվել հայերի կողմից:

— Նրանք ինձ պատմել որբանոցում»:

«Ես հարցրի երեխայի գրում է այնուհետև անգլ ցին,— ի՞նչ էր քո հին ա նը: Աղջիկը մի փոքր-ինչ տանվելով, վախով ասաց.

— Իսկ դու ուզո՞ւմ ես, ես ճշմարտությունը պատմ

— Այո՛:

— Դե նախ և առաջ ա դու ինձ կմատնե՞ս քեզ խա:

— Այո՛:

— Դե երդվիր քո ծնող րով և Աստծո անունով:

Երդվում եմ:

Ապա աղջիկը սկսեց պատմությունը: Նա աս «Մեր փոքրիկ գյուղը գտնվ էր լեռան ստորոտում: Յուր քանչյուր գյուղացի ուներ սեփական հողակտորը, լորն էլ հարուստ էին...

Մի առավոտ մեր գյու մտած կարմիր վրակարված ունեցող շալվարավորներ մարդիկ (նա ի նկատի ուն ժանդարմներին) հավաքեց գյուղի բոլոր տղամարդկան ու երիտասարդներին, որոն թվում հորս ու եղբայրներիս ու բոլորին քշեցին գյուղից

Օ՜, ինչքան էի սիրում հ րըս: Ես աղաչում էի նրան ինձ վերադարձնել հորս, բա ինձ ծեծում էին և վռնդում հ ռու... Տղամարդկանց ու եր տասարդներին դաժանորե ծեծելուց հետո երկու-երկ կապեցին միմյանց ու տարա հեռո՜ւ-հեռո՜ւ, ես չգիտե ուր... Մի քանի օր անց, տեսա, որ մայրս լաց էր լ նում... Ես հասկացա, որ հ րըս, մյուսների հետ միասի սպանել էին: Խեղճ մորս այնքան ծեծեցին, որ նան պարհի կեսին մահացավ...

Ճանապարհի ամբողջ եր կայնքով ոչինչ չէր կարել տեսնել, բացի դիակներից Քարավանի մեծ մասը ճանա պարհին մահացավ: Ոչինչ չ կար ուտելու, խմելու, և մեն ստիպված էինք կիզիչ արև տակ քայլել ու քայլել...

Երբ հասանք Հալեպ, ի անունը փոխեցին՝ Միրանուշ փոխարեն Ջելիլե դրեցին և տեղավորեցին թուրքական որբանոցում...»: «Միք թողնի ինձ այստեղ, աղաչում եմ, ես փոքրիկ եմ ու բոլորովին մենակ...», աղերսում էր երեխան»:

Ահա թե ինչպիսի՜ «ապահովությամբ» էին բռնագաղթվածները տեղ հասնում:

Թալեաթը իր հեռագրերից մեկում տեղական իշխանություններից պահանջում էր «կենդանի չթողնել ոչ մի հայի, հատկապես հինգից-յոթ տարեկան երեխաներին, այլապես կարճ ժամանակում նրանք հասակ կառնեն և կձգտեն վրեժ լուծել»:

Թալեաթը թիվ 880 ծածկագրով (ամսաթիվը չի նշված) պահանջում էր «հավաքել և պահել միայն այն որբերին, ովքեր չեն կարող հիշել այն խոշտանգումները, որոնց ենթարկվել են նրանց ծնողները: Մնացածներին հեռացրեք քարավանների հետ միասին»: Սակայն որոշ ժամանակ անց, իր իսկ հրահանգը համարելով խիստ «մարդասիրական», Թալեաթը 1915 թվականի սեպտեմբերի 21-ի ծածկագրում ավելացնում է. «Ժամանակը չէ տուրք տալ զգացմունքներին և խնայել որբերին, երկարացնելով նրանց կյանքը: Քշեք նրանց անապատ և տեղեկացրեք մեզ»:

Թալեաթը գոհ չէր, որ հայերի բնաջնջման իրենց պլանների իրագործումը ձգձգվում էր: 1916 թ. հունվարի 10-ի թիվ 57 ծածկագրով նա հրահանգում էր ռազմական իշխանություններին. «ամենադաժան միջոցների դիմել նրանց նկատմամբ, ովքեր դեռևս կենդանի են»:

Հայերի ցեղասպանությունը շարունակվեց 1915—1916 թվականների ընթացքում: Այդ քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա տարիներին:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

Նախագահությունը քննարկեց...

ՀՀ ԳԱԱ նախագահության մարտի 30-ի նիստում լսվեց ամերիկահայ նշանավոր գիտնական, երկրաբան, նավթի ու գազի հանքավայրերի հռչակավոր հետազոտող Գևորգ Չիլինգարյանի հաղորդումն իր գիտական գործունեության մասին՝ նավթի երկրաբանության և արդյունաբերության բնագավառում: Սկզբում նրան ներկայացրեց ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Ռ. Ջրբաշյանը: Այնուհետև ձայնը տրվեց Գ. Չիլինգարյանին:

Ծնվել է 1929 թ., Թբիլիսիում, այնուհետև ծնողների հետ փոխադրվել է Պարսկաստան, ապա՝ ԱՄՆ: Բարձրագույն կրթությունն ստացել է ԱՄՆ-ում: Նա պրոֆեսոր է, աշխարհի բազում ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ, Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի արտասահմանյան ակադեմիկոս: Նրա գրչին են պատկանում 45 մենագրություն, շուրջ 500 գիտահետազոտական մեծ ու փոքր աշխատություններ: Արժանացել է շատ երկրների գիտական և կառավարական բարձր պարգևների, այդ թվում Լոմոնոսովի անվան մեդալի (նրա գիտական կենսագրությանը «Նպատակը» կանդրադառնա իր առաջիկա համարներից մեկում):

Նախագահության անդամները և հրավիրված երկրաբանները մեծ հետաքրքրությամբ լսեցին պրոֆեսոր Գևորգ Չիլինգարյանին: Այնուհետև նա պատասխանեց առաջադրված հարցերին, որոնց մեջ առաջնային տեղ էր գրավում բոլորիս հետաքրքրող մի հարց՝ արդյո՞ք, Հայաստանի ընդերքում նավթ և գազ կա, թե ոչ: Գիտնականը, որ արդեն ծանոթ է եղած նյութերի մի մասին և առաջիկայում նույնպես ուսումնասիրելու է Հայաստանում մինչ այժմ կատարված նավթի որոնումների հետազոտական գիտական արդյունքները, ասաց.

— Այդ հարցին այսօր չեմ կարող միանշանակ պատասխանել՝ այո, թե՛ ոչ: Թեև լավատեսությամբ եմ լցված և իբրև հայ, ինչ ես հպարտ եմ, որ հայ եմ... ամեն ինչով պատրաստ եմ օգնել իմ ազգակիցներին: Այդ հարցի պատասխանը ես կտամ վեց ամիս հետո, երբ կավարտեմ բոլոր նյութերի և փորձարկումների արդյունքների ուսումնասիրությունը: Այժմ ես ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի մի խումբ գիտնականների հետ միասին զբաղված եմ այդ պրոբլեմով:

ԳԱԱ՝ նախագահության նիստում լսվեց պրեզիդենտի ինֆորմացիան՝ այս տարվա մայիսին գիտությունների ազգային ակադեմիայի 50-ամյակի տոնակատարության անցկացման գործնական միջոցառումների մասին: Ստեղծվեց ակադեմիայի 50-ամյակի հոբելյանական հանձնաժողով՝ Ֆ. Տ. Սարգսյանի նախագահությամբ:

Կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Արմեն Գալոյանը հանդես եկավ ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի և Ռուսաստանի Դաշնության ԳԱ Ս. Հ. Բախի անվան կենսաքիմիայի ինստիտուտների միջինստիտուտային լաբորատորիայի ստեղծման մասին հաղորդմամբ: Նախագահությունը հավանություն տվեց վերոհիշյալ երկու ինստիտուտներում Ա. Ա. Գալոյանի ղեկավարությամբ նեյրոհորմոնների կենսաքիմիայի միջինստիտուտային լաբորատորիայի ստեղծման պայմանագրին:

Լսվեց նաև «Նեյրոքիմիա» ամսագրի խմբագրական կոլեգիայի և խմբագրական խորհրդի մասին հաղորդումը: Նախագահությունը որոշեց՝ ընդունել ի գիտություն, որ Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիան ՀՀ ԳԱԱ առաջարկով որոշում է կայացրել՝ ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ հրատարակել «Նեյրոքիմիա» ամսագիրը, որպես երկու ակադեմիաների օրգան:

Հաստատվեցին ամսագրի խմբագրական խորհրդի և կոլեգիայի կազմերը, նախագահությանն առընթեր գրադարանային խորհրդի կազմը:

Ի շահ խաղաղության

Մարտի 29-ին տեղի ունեցավ «Համաշխարհային ընկերակցություն» (ԱՄՆ, Սան Ֆրանցիսկո) կազմակերպության ներկայացուցիչների հանդիպումը ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների հետ: Հյուրերի կազմում էին Կրեգ Բանսին, Լիբի Թրաուման, Սամանտա Նոմֆեյզը և Լորեն Գրորը: Նրանք Հայաստան են ժամանել նպատակ ունենալով, օգնել շահագրգիռ կողմերին՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ լուծման գործում: Հյուրերին ներկայացրեց Հայաստանից այդ կազմակերպությանը աշխատակցող ԳԱԱ թղթակից անդամ Էմիլ Գաբրիելյանը: Նա երկրորդ տարին է, ինչ գործնական կապեր է պահպանում «Համաշխարհային ընկերակցություն» կազմակերպության հետ:

ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը հյուրերի խնդրանքով համառոտակի պատմեց Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտամշակութային կյանքի, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, ԼՂՀ հայերի արդարացի ազատագրական պայքարի, ինքնորոշման պահանջի և այլ օրախնդիր հիմնահարցերի մասին: Նա հատկապես շեշտեց հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիրքորոշումը պատերազմական գործողություններն անհապաղ դադարեցնելու և քաղաքական ճանապարհով հիմնահարցը լուծելու անհրաժեշտությունը: Պրեզիդենտը ողջունեց «Համաշխարհային ընկերակցության» նախաձեռնությունը, այն է՝ ոչ պաշտոնական ուղիներով մտավորականության, գիտնականների ջանքերով, նպաստել տարածաշրջանում խաղաղության հաստատմանը: Պատվիրակության ներկայացուցիչները, որ եղել են Ադրբեջանում և մեկնելու են Ստեփանակերտ, ծանոթացրին իրենց կազմակերպության ծրագրերին, ներկա առաքելությանը, նշելով, որ իրենց այցի նպատակն է նպաստել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի շուրջ քաղաքական երկխոսության զարգացմանը:

Ակադեմիայի նախագահությունը հաջողություն մաղթեց «Համաշխարհային ընկերակցություն» կազմակերպության պատվիրակության ներկայացուցիչներին՝ իրենց ազնիվ և պատասխանատու գործունեության մեջ:

Պատմության և տնտեսագիտության բաժանմունք

Պատմության և տնտեսագիտության բաժանմունքն ունի հարուստ ավանդույթներ, որոնք սկիզբ են առնում 20-ական թվականների սկզբներից: Պատմագիտության բնագավառի ղեկավարումը կապվում է Արմֆանի հիմնադրման հետ, որի համակարգում 1935 թ. ստեղծվեց պատմության, հնագիտության և ազգագրության սեկտորը՝ Ս. Տեր-Ավետիսյանի գլխավորությամբ:

1943 թ. նոյեմբերին նորաստեղծ գիտությունների ակադեմիայի կազմում ստեղծվեց Հասարակական գիտությունների բաժանմունքը, որի առաջին ղեկավարն էր ակադեմիկոս Գ. Ղափանցյանը (1943—1949 թթ.):

1977 թ. Հայաստանի ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքը բաժանվում է երկու ինքնուրույն ճյուղերի՝ պատմության ու տնտեսագիտության և փիլիսոփայության ու բանասիրության:

Պատմության և տնտեսագիտության բաժանմունքը գլխավորել են ակադեմիկոսներ, Գ. Ղարիբջանյանը (1977—1982 թթ.), Բ. Առաքելյանը (1982—1990 թթ.), 1990 թվականից՝ տողերիս հեղինակը:

Բաժանմունքում ընդգրկված պատմաբաններն ու տնտեսագետները գիտությունը հարստացրել են արժեքավոր ուսումնասիրություններով: Մասնավորապես ուշադրության կենտրոնում է եղել «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի ստեղծումը, որը մեծ ավանդ է հայ պատմագրության մեջ: Ներկայումս բաժանմունքի անդամները շարունակում են զարգացնել նախորդ շրջանի հայ պատմագիտության և հայագիտության, տնտեսագիտական մտքի հարուստ ավանդույթները:

Բաժանմունքի և նրա գիտահետազոտական ինստիտուտների գործունեությունը հիմնականում ընթացել է հայ ժողովրդի պատմության համակողմանի ուսումնասիրության, Հայաստանի գիտատեխնիկական ներուժի զարգացման, տնտեսական հիմնահարցերի և Հայաստանի Հանրապետության տնտեսական անկախության սկզբունքների մշակման, հնագիտական, ազգագրական, բանագիտական, էթնոսոցիոլոգիական և մարդաբանական հիմնահարցերի հետազոտման, մշակույթի և եկեղեցու պատմության, հասարակական-քաղաքական կյանքի ժամանակակից խնդիրների մշակման, սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բազմապիսի հարցերի ուսումնասիրման, հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի մշակման և վերլուծության ուղղությամբ:

1977 թվականից, պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ձևավորմամբ կենտրոնացվեցին բաժանմունքի համակարգում եղած հարակից գիտությունները, մշակվեց բաժանմունքի ստորաբաժանումների գիտակազմակերպչական ղեկավարումը, ինչը խթանեց բաժանմունքի աշխատանքների արդյունավետությունը:

1988 թվականին սկսված ղարաբաղյան ազգային ազատագրական համաժողովրդական շարժումը, ապա 1990 թ. Հայոց պետականության վերականգնումը էական ազդեցություն թողեցին նաև հայ պատմագիտության և տնտեսագիտական մտքի, գիտնականների ստեղծագործական աշխատանքների վրա:

Այժմ բաժանմունքի կազմում գործում են ՀՀ ԳԱԱ-ի վեց ստորաբաժանումներ՝ պատմության, տնտեսագիտության, հնագիտության և ազգագրության, արևելագիտության ինստիտուտները, Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը, սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժինը:

Բաժանմունքի այս հիմնարկներում ներկայումս մշակվում է 72 թեմա, հրատարակության են պատրաստվել բազմաթիվ մենագրություններ ու հոդվածներ:

Բազմակողմանի են բաժանմունքի միջազգային գիտական կապերը: Վերջին տարիներին Երևանում հրավիրված միջազգային գիտաժողովների, հոբելյանական հանդիսությունների շարքում հիշարժան են 1990 թ. ապրիլի 17—19-ին՝ 1915 թ. հայերի մեծ ցեղասպանության 75-ամյակին, 1991 թ. ապրիլի 11—14-ին՝ «Հայ-ռուս-թուրք-ադրբեջանական հարաբերությունները 1917—1923 թթ.» թեմային, նույն թվականի հոկտեմբերին՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակին, 1992 թ. սեպտեմբերի 21—27-ին՝ Արևելքի և արաբական հարկրների հայկական համայնքներին նվիրված գիտաժողովները և ուրիշ շատ միջոցառումներ: Բաժանմունքի գիտնականները գործուն մասնակցություն են ունեցել նաև միջազգային բազմաթիվ գիտաժողովների, այդ թվում՝ 1978—1988 թթ. Իտալիա—Երևան հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումին, 1992 թ. Սալոնիկի Մակեդոնիայի պատմությանը նվիրված միջազգային կոնգրեսին, 1980—1991 թթ. Վենետիկում, Լեյդենում, Լոնդոնում, Լենինգրադում, Փարիզում, Բեռլինում հրավիրված ատրագետների միջազգային կոնգրեսներին, 1989 թվականին Բուդապեշտում, Լայպցի-

գում, Պոզնանում
սեպագրագետների
մանը, 1992 թ. Դեկ
ջազգային բանգր
տական կոնֆերանսն
գիտաժողովների աշ
ներին:

Բաժանմունքում
ժամանակաշրջանում
մեկ տարում ընդհանուր
ղովներում և բյուրո
րում քննարկվել
կազմակերպչական
այդ թվում ԳԱԱ
թյան նախագիծը,
ամյակին նվիրված
քի նախապատրաստ
հայ պարբերական
հիմնադրման 200
հանդիսությունների
ման և այլ հարցեր

Հրաչիկ Սիմ
ՀՀ ԳԱԱ պատմ
տնտեսագիտությ
մունքի ակադեմի

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Շարունակելով նախորդների ժառանգությունը

1943 թվականին, երբ հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, այդ համակարգում ստեղծվեց նաև հասարակական գիտությունների բաժանմունքը, որի ակադեմիկոս-քարտուղարներն են եղել Գ. Ղափանցյանը (1943—49 թթ.), Աշ. Հովհաննիսյանը (1949—60 թթ.), Ա. Կարինյանը (1960—62 թթ.), Մ. Ներսիսյանը (1962—65 թթ.), Ս. Երեմյանը (1965—68 թթ.), Ծ. Աղայանը (1968—77 թթ.): 1977 թվականին հասարակական գիտությունների բաժանմունքի հենքի վրա ստեղծվեցին երկու՝ փիլիսոփայության ու բանասիրության և պատմության ու տնտեսագիտության բաժանմունքները:

Փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքն իր ստեղծման օրից ներառել է փիլիսոփայության և իրավունքի, Հ. Աճառյանի անվան լեզվի, Մ. Աբեղյանի անվան գրականության, արվեստի ինստիտուտները, իսկ 1992 թվականից՝ նաև այդ թվին կազմավորված սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը:

Բաժանմունքն անցյալից է ժառանգել գիտական մեծ ներուժ: Բավական է միայն նշել Հայաստանի գիտությունների ակադեմիայի 23 հիմնադիր անդամներից 6-ը եղել են բաժանմունքում ընդգրկված գիտությունների ներկայացուցիչներ, և այն էլ այնպիսիք, ինչպիսիք էին Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Գրիգոր Ղափանցյանը, Ստեփանոս Մալխասյանը, Արսեն Տերտերյանը, հայ գրականության դասական Ավետիք Իսահակյանը: Հայագիտության, հայ հոգևոր մշակույթի այս փայլուն համաստեղությունը հետագա տարիներին համալրվեց այնպիսի անուններով, ինչպիսիք էին Դերենիկ Դեմիրճյանը, ու Ստեփան Զորյանը, Մարտիրոս Սարյանն ու Արամ Խաչատրյանը, Կարո Մելիք-Օհանջանյանն ու Լևոն Մելիքսեթ-Բեկը, Մարիետա Շահինյանն ու Ալեքսեյ Ջիվիլեգովը, Վազգեն Չալոյանը և այլք:

Այժմ բաժանմունքի կազմում են ընդգրկված չորս ակադեմիկոս և ութ թղթակից անդամ: Նրանք ստեղծագործում են բաժանմունքի կազմում գտնվող ինստիտուտների հետ սերտ համագործակցությամբ և ունեն զգալի հաջողություններ հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում, մասնավորապես, հայագիտության ասպարեզում: Այդ հաջողությունները պետք է բացատրել նաև այն գիտական ավանդույթներով, այն նվաճումներով, որոնք նրանք ժառանգել են իրենց հռչակավոր նախորդներից: Ձևափոխելով Նյուտոնի խոսքերը, կարելի է ասել, որ նրանք մեծ են, քանի որ կանգնել են իրենց նախորդող մեծերի ուսերին:

Բաժանմունքը գիտությունների ակադեմիայում փիլիսոփայության, իրավունքի, սոցիոլոգիայի, հոգեբանության, լեզվաբանության, գրականագիտության, արվեստաբանության բնագավառում նոր գաղափարների առաջացման գեներատորն է, ինստիտուտներում ձեռք բերված արդյունքների գիտական փորձակետը: Այդ իսկ պատճառով էլ բաժանմունքում քննարկված տարբեր հարցերի ու զեկուցումների շարքում առանձնանում է հետևյալ առանցքային խնդիրը՝ քննարկել, թե ինչ նվաճումներ կան գիտական աշխարհում բաժանմունքի ընդգրկած գիտություններից յուրաքանչյուրի բնագավառում, որոնք են դրանց զարգացման միտումները, ինչով են բաժանմունքի գիտնականները մասնակցում համաշխարհային գիտության զարգացմանը և ինչպես են օգտվում նրա նվաճումներից: Այլ կերպ ասած՝ բաժանմունքի գիտնականները ինչ են վերցնում համաշխարհային գիտությունից և ինչով են մտնում համաշխարհային գիտության մեջ: Նման քննարկումների ընթացքում, ըստ էության, ստեղծվում է գիտության համապատասխան բնագավառի գաղափարների բանկ, որն անշուշտ մեծապես կնպաստի հայագիտության հետագա զարգացմանը:

Տվյալ խնդրի իրագործումն առաջին հերթին բաժանմունքի անդամների և ինստիտուտների խնդիրն է: Սակայն զեկուցողների առջև խնդիր է դրված նաև պարզել համապատասխան բնագավառներում ընդհանրապես հայ գիտնականների, այդ թվում նաև սփյուռքի գիտնականների տեղը ու դերը համաշխարհային գիտության զարգացման գործում: Այս խնդիրը չի լուծվում մեկական զեկուցումներով ու քննարկումներով. դա գործընթաց է, որը մշտապես գտնվում է և պետք է գտնվի բաժանմունքի ուշադրության կենտրոնում:

Բաժանմունքի ինստիտուտներից Հ. Աճառյանի անվան լեզվի, Մ. Աբեղյանի անվան գրականության, արվեստի ինստիտուտներն առավելապես և ըստ էության հայագիտական ինստիտուտներ են, փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը և սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը զբաղվում են ինչպես հայագիտական, այնպես էլ ընդհանուր տեսական հարցերով:

Լեզվի ինստիտուտի գիտական ուղղություններին լիցք են տվել Հրաչյա Աճառյանի հետազոտությունները, որոնք ընդգրկում են հայերենագիտության գրեթե բոլոր բնագավառները: Ինստիտուտն, իրավամբ, կրում է մեծ գիտնականի անունը: Այժմ ինստիտուտի գիտնականները ակադեմիկոս Գ. Ջահուկյանի գլխավորությամբ, հաջողությամբ մշակում են հայոց լեզվի պատմության և տեսության արդիական հարցերը:

Գրականության ինստիտուտը իր նշանավոր երախտավորի՝ Մանուկ Աբեղյանի անունն է կրում, մի գիտնականի, որի աշխատությունները, գաղափարները ինստիտուտի գիտահետազոտական ուղղությունների հիմքն են ծառայել: Այժմ ինստիտուտում ակադեմիկոս Է. Ջրբաշյանի ղեկավարությամբ հետազոտություններ են կատարվում հայ հին և նոր գրականության, ժողովրդական բանահյուսության, բնագրագիտության, գրականության տեսության, սփյուռքահայ գրականության և հարակից հարցերի ուղղությամբ:

Արվեստի ինստիտուտը (որի տնօրենն է եղել ակադ. Ռ. Զարյանը), հիմնադրման օրից (իսկ այժմ տնօրենն է ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Լ. Հախվերդյանը) կարևորագույն նվաճումներ ունի հայ արվեստի և ճարտարապետության պատմության ու տեսության բնագավառում և [illegible]. Հաջողությամբ շարունակում է խոր գիտահետազոտական գործունեությունը:

Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը (տնօրեն՝ պրոֆ. Ա. Էլմայան) ընդհանուր տեսական հարցերի՝ իմացաբանության և գիտության փիլիսոփայության, սոցիալական փիլիսոփայության, գեղագիտության, մշակութաբանության, պետաիրավական, սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունների հետ միասին հատուկ ուշադրություն է դարձնում հայ փիլիսոփայության պատմության հետազոտության վրա, որն զգալիորեն հենվում է ՀՀ ԳԱԱ թղթ. անդամներ Վ. Չալոյանի և Ս. Արևշատյանի աշխատությունների և թարգմանությունների վրա:

Սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը (ղեկ.՝ փ.գ.թ. Գ. Պողոսյան) կարևոր աշխատանք է կատարում աղետների սոցիոլոգիայի (կապված Սպիտակի երկրաշարժի հետ), հասարակական կարծիքի ուսումնասիրության բնագավառում:

Իր գործունեության ընթացքում բաժանմունքը ելել է այն դրույթից, որ գիտությունը չի կարող սահմանափակվել ազգային շրջանակներում, անգամ այն դեպքում, երբ ուսումնասիրության բուն նյութը ազգային հարցերն են: Մինչդեռ, երբեմն որոշակի պայմաններում նման վտանգ կարող է առաջանալ: Հայոց լեզվի, հայ գրականության, հայ փիլիսոփայության, հայ արվեստի հետազոտությունների բնագավառում բաժանմունքի համապատասխան ինստիտուտները դարձել են միջազգային ճանաչում ստացած կենտրոններ: Եթե այլ գիտությունների բնագավառում մենք չափանիշը տեսնում ենք համաշխարհային համբավ ունեցող գիտական կենտրոններում և այդ չափանիշով որոշում մեր սեփական հաջողությունները, ապա հայագիտության բնագավառում մենք երբեմն դիմում ենք ինքնաչափանիշի, իսկ դրանով հրապուրվելը կարող է խափանել հայագիտության զարգացումը: Հայագիտությունն իրականում կարող է զարգանալ, երբ հայագիտության ուսումնասիրվող բնագավառում բազմակողմանիորեն հաշվի են առնվում ընդհանուր տեսական հետազոտությունների արդյունքները: Դրան զգալիորեն նպաստում են միջազգային գիտաժողովները, որտեղ ի մի են բերվում հայ գիտության այս կամ այն բնագավառի նվաճումները՝ դրանք դարձնելով համաշխարհային գիտական հասարակության քննության նյութ:

Նշված տեսանկյունից բաժանմունքն ունի որոշակի նվաճումներ: Հիշենք 1980 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ հայ մեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթի 1500-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողովները Երևանում, Մոսկվայում, Թբիլիսիում, Ֆրանսիայի, Բուլղարիայի տարբեր քաղաքներում և այլուր: Այդ գիտաժողովների նյութերը հնարավորություն ընձեռեցին նորովի և բազմակողմանի գնահատել հայ մտածողի տեսական ժառանգությունը, որոշել նրա դերն ու տեղը փիլիսոփայության և տրամաբանության համաշխարհային պատմության մեջ:

Փաստարկման տեսությանը նվիրված կոնֆերանսները Հայաստանում և հայ գիտնականների նախաձեռնությամբ կազմակերպված գիտաժողովները Անգլիայում, Բելգիայում, Նիդեռլանդներում, Ֆինլանդիայում միջազգային ճանաչում բերեցին փաստարկման տեսության հայկական դպրոցին:

Արվեստի ինստիտուտի գործուն նախաձեռնությամբ 1979—1988 թթ. ընթացքում միջազգային հինգ գիտաժողովներ են տեղի ունեցել Հայաստանում և Իտալիայում, որոնք զգալիորեն նպաստել են հայ ճարտարապետության, հայ արվեստի նվաճումների ընդունմանը համաշխարհային չափանիշներով: Երևանում կազմակերպված 1982 և 1987 թթ. հայերենագիտության և 1986 թ. հայ հին և միջնադարյան գրականության հարցերին նվիրված միջազգային գիտաժողովները հայագիտության տվյալ բնագավառների հաջողությունների ստուգատեսն էին և միևնույն ժամանակ նոր ծրագրերի ու հետազոտությունների մշակման կարևորագույն խթաններից մեկը:

Բաժանմունքի ինստիտուտների գիտնականներն ակտիվորեն մասնակցում են տարբեր երկրներում տեղի ունեցող համաշխարհային և միջազգային գիտաժողովներին, դասախոսություններ կարդալու համար հրավիրվում արտասահմանյան նշանավոր համալսարաններ: Այդ գիտաժողովները, զեկուցումներն ու դասախոսությունները ևս հնարավորություն են տալիս պատասխանելու այն հարցին, թե ինչ ենք վերցնում համաշխարհային գիտությունից և ինչով ենք այն ավելացնում, որն ի վերջո, նպաստում է հայրենական հետազոտությունների առաջընթացին:

Բաժանմունքի գիտական հետազոտությունների պրակտիկան ցույց է տալիս, որ անջրպետ չպետք է անցկացնել

հիմնարար-տեսական
րառական ուսումն
թյունների միջև: Թե
լեզվի, գրականությ
տիտուտները հիմն
տազոտություններ
են: Այդպես էլ կա
միայն այդպես: Բա
րի ստեղծումը լեզվի
տուտի կարևոր խնդ
մեկն է, իսկ դա կի
հետազոտություն է
այն հենվում է
տեսական հետազոտ
ների վրա: Նույնը կարե
ասել նաև հայերենի
նաբանության և
թյան մասին: Գրակա
ինստիտուտը պատր
կազմակերպում է
կան գրողների
կան հրատարակ
ձյա կիրառական
սիրություն՝ հիմնար
կան հետազոտ
հենքի վրա: Փիլիսոփ
և իրավունքի ինստի
հիմնարար հետազո
ներին զուգընթաց
վում են կիրառական
նասիրություններ,
րենք նշանակությ
մեր հասարակությ
վա կյանքի համար,
օրինակ, ՀՀ սահման
թյան նախագծի
մասնակցելը, մի շ
նագծերի նախապատ
մը, առաջատարի
թյան սկզբունքներ
մը Սպիտակի երկր
հոգեբանական հետ
րի վերլուծության
ռում:

Բաժանմունքում
նացած գիտական
նորհիվ ձեռք են
շակի հաջողություն
կայն արվածը
քիչ է, քան անելիք

Գ. Ա

ՀՀ ԳԱԱ փիլիսոփ
և բանասիրությ
մունքի ակադեմի

ՄԵԿ ՏԱՐՈՒՄ...

«ՄԱՇՏՈՑ» ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տեսականորեն հետազոտվել է 5 ալիքատարներում արգելաշերտի միջոցով լույսի թունելային անցման երևույթի ազդեցությունը պլանարային մոդաների վրա: Ցույց է տրվել, որ արգելաշերտի որոշակի լայնության դեպքում պլանարային մոդաները կարելի է դիտարկել որպես որոշակի լայնություն ունեցող [illegible] (ֆ.մ.գ.թ. Է. Հարությունյան):

1993 թ. տպագրվել է 2 հոդված արտասահմանում, հանձնված է տպագրության 2՝ արտասահմանում:

Կատարվել է 3 թեմա: Կատարվել է լազերային ամպլիֆիկատորի լաբորատոր նմուշի փորձարկում և ընտրվել է նրա փորձնական նմուշի կառուցվածքի կատարելագործման տարբերակը: Ավարտվել է դրա էսքիզային նախագծումը:

Ի տարբերություն մյուսների, լազերային ամպլիֆիկատորը հարմար է օգտագործելու պատրաստ հիվանդների համար: Ունի փոքր չափեր (820×27×65) և քաշ (ոչ ավել քան 5 կգ):

Առաջարկվել է ներքին օրգանների լազերային թերապևտիկ ներգործման նոր մեթոդ:

[illegible] օպտիկական հաստատունների ճշգրիտ չափման համար մշակվել և պատրաստվել է նոր ալիքային-օպտիկական համակարգ:

Ստացվել է 1 հեղինակային արտոնագիր և ներկայացվել է 1 արտոնագրային հայտ:

ՄԵԿ ՏԱՐՈՒՄ...

ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Որոշվել են տարբեր տեսակի բարձրջերմաստիճանային տաքացուցիչների համար պատրաստուկների ստացման պայմանները՝ մոլիբդենի, սիլիցիումի օքսիդների խառնուրդների հիմքի վրա տաք մամլման մեթոդով այրման ռեժիմում: ԻԲՍ մեթոդով սինթեզվել է սիլիցիումի մանրդիսպերսային կարբիդ 85 տոկոս ելքով (քիմ. գիտությունների թեկնածու Ս. Լ. Խառատյան):

ԻԲՍ մեթոդով սինթեզվել են բազմաբաղադրիչ հիդրիդներ՝ տիտանի, ցիրկոնիումի, մագնիումի, ալյումինի և ազոտի հիմքի վրա: Ստացված միացությունները փորձարկված են որպես ջրածնի կուտակիչներ (տեխնիկական գիտ. դոկտոր Ս. Կ. Դոլուխանյան):

Որոշվել է նիկելի օքսիդից ամորֆ նիկելի ստացման հնարավորությունը՝ առաջին մակարդակում գտնվող գրգռված ջրածնի մշակման ճանապարհով (ֆիզ.-մաթ. գիտությունների թեկնածու Ռ. Տ. Մալխասյան):

Քննարկված են [illegible] ռեակցիաների բազային մեխանիզմի որոշման և փոխազդող մասնիկների ռեակցիոն ունակության հարցեր (քիմ. գիտությունների դոկտոր Լ. Ա. Թավադյան):

Քվանտա-քիմիական եղանակով գնահատված է մեթիլի ռադիկալի էթիլենի հետ փոխազդման էներգետիկ արգելքը (քիմ. գիտ. դոկտոր Ա. Հ. Մանթաշյան):

Կատարվել է 13 թեմա:

ՄԵԿ ՏԱՐՈՒՄ...

ԷԿՈԼՈԳԱՆՈՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կազմված է Սևանա լճի ավազանի մթնոլորտի աղտոտման քարտեզը (է.հ. գիտ. թեկնածու Մ. Ա. Կուկուլյան):

Հայտնաբերված է կանաչ գոտիների կողմից ծանր մետաղների բարձր խտությունների տարածական տեղաբաշխման սահմանափակող դերը (ե.հ. գիտ. թեկնածու Ա. Կ. Սաղաթելյան):

Կազմված է Երևան քաղաքի տարածքի կապարով աղտոտման 1:10000 մասշտաբի քարտեզը (Մ. Ա. Առաքելյան):

Երևան քաղաքի համար մշակվել է բույսերի տեսականի, կայուն շրջակա միջավայրի կապարով աղտոտման պայմաններին (կենս. գիտ. թեկնածու Հ. Ա. Հովհաննիսյան):

Հետազոտվել են ծանր մետաղների հեղուկ և կարծր ֆազաների պարունակությունները մթնոլորտային տեղումներում: Հաստատված է, որ վերջիններս կազմում են մթնոլորտային տեղումներում իոնների ընդհանուր քանակի 3,3 տոկոսը (կենս. գիտ. թեկնածու Վ. Լ. Անանյան):

Մշակված է մկնդեղով հողերի աղտոտման դետոքսիկացիայի մեթոդիկան, որը թույլ է տալիս 25 անգամ իջեցնել այդ տարրի շարժուն ձևերի պարունակությունները (գյուղ. գիտ. թեկնածու Ռ. Հ. Ռևազյան):

Կատարվել է 3 թեմա:

ՄԵԿ ՏԱՐՈՒՄ...

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Բաժանմունքի կազմում եղել են ֆիզիկական հ
տազոտությունների, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկա
յի (ՌՖԷԻ) ինստիտուտները, Բյուրականի աստղ
դիտարանը, ֆիզիկայի կիրառական պրոբլեմնե
ինստիտուտը, մաթեմատիկայի ինստիտուտը, ռադ
ֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ՀԿՏԲ-ն

1993 թ. անց է կացվել բաժանմունքի 3 ընդհանու
ժողով և բյուրոյի 19 նիստ:

Բաժանմունքի բյուրոյի նիստերում քննարկվել
բաժանմունքի ինստիտուտների գործունեության, ա
պիրանտուրայի, արտասահմանյան գործուղումների
ԳԱԱ կարգավիճակի և օրենսդրության, փորձագի
կան պրոբլեմային խորհուրդների իրավունքների
պարտականությունների, արտասահմանից գիտն
կանների հրավիրման հարցերը, ՀՀ ԳԱԱ 50-ամ
յակին նվիրված ժողովածուի նյութերը:

Անց է կացվել ՀՀ ԳԱԱ տեղեկագիր «Ֆիզիկա
հանդեսի խմբագրական կոլեգիայի ընտրությունը
Գլխավոր խմբագիր է ընտրվել թղթ. անդամ Վ. Մ
Հարությունյանը:

Մշակվել են ֆիզիկայի, մաթեմատիկայի, ռա
դիոֆիզիկայի բնագավառներում հիմնարար հետազ
տությունների նախագծերը:

Հին և նոր աշխարհների ճամփաներով

Հայտնի ճշմարտություն է, որ մենք մեր կողքին ապրող, մեզ հետ աշխատող մարդկանց ծառայությունները գնահատելիս ավելի ժլատ ենք, մանավանդ երբ այդ մարդը հեռու չէ իր գործերը ցուցադրելու [illegible]:

Պատմական գիտությունների դոկտոր, Չարենցի անվան մրցանակի դափնեկիր Սիմոն Գրքաշարյանը (Կրկյաշարյան) պատկանում է այդ մարդկանց թվին: Իմ թվարկած տիտղոսները նա ստացել է համեմատաբար ուշ, բայց արդեն տասնամյակներ ([illegible] թթ. վերջերից) նա անխոնջորեն մասնակցում է Հայաստանի մշակութային կյանքին իբրև թարգմանիչ և պատմաբան: Հատկապես մեծ են նրա ծառայությունները հայ գրականությանը: Երկար տարիներ նա փաստորեն միակ մարդն էր, որ թարգմանություններ էր կատարում հին հունարենից, թարգմանում էր բնագրից և ոչ թե մի երրորդ լեզվից, ինչպես, դժբախտաբար, շատ հաճախ պատահում է: Գրքաշարյանն ավարտել է հունական գիմնազիան (հայկական դպրոցից հետո) և հին հունարենին տիրապետել այնտեղ: Այս լեզվի իմացությունը նրան ճանապարհ է բացել դեպի մեր քաղաքակրթության արմատներից մեկը՝ հին հունական մշակույթը, որի [illegible] Հայաստանում [illegible] էին խոսում դեռևս հինգերորդ դարում՝ մեր գրականության արշալույսին: Հայ գրականության հազար հինգհարյուրամյա պատմության ողջ ընթացքում մենք թարգմանություններ ենք կատարել հին հունարենից, այս կապերը շատ արդյունավետ են եղել մեր մշակույթի զարգացման համար: Սիմոն Գրքաշարյանը շարունակողն է այս մեծ, մեզ համար այնքան կարևոր ավանդույթի և, առանց վարանելու, տաղանդավոր շարունակողն է:

Հիշեմ միայն նրա կարևորագույն թարգմանությունները, որպեսզի պարզ դառնա, թե ինչքան շատ բան մենք կորցրած կլինեինք առանց դրանց: Մեր ժողովրդի հնագույն շրջանի պատմության մասին խոսելիս մենք չենք կարող շրջանցել հին հունական մշակույթի շատ հայտնի երկերից մեկը՝ Քսենոփոնի «Անաբասիսը»: Այդ գործի արևելահայերեն՝ ամբողջական թարգմանությունը կատարել է Սիմոն Գրքաշարյանը: Համեմատաբար վերջերս հրատարակվեց Հին Հունաստանի պատմագրության կոթողային կոթողից մեկը՝ Հերոդոտոսի «Պատմությունը», որը նույնպես թարգմանել է Ս. Գրքաշարյանը: Այս երկու թարգմանությունները արդեն բավական կլինեին, որպեսզի Գրքաշարյանին արժանի տեղ ապահովվեր հայ թարգմանական գրականության մեջ: Բայց նա թարգմանել է նաև Հովսեպոս Փլավիոսի, Դիոն Կասսիոսի և այլոց երկերը, որոնց մեջ չափազանց կարևոր տեղեկություններ կան մեր ժողովրդի անցյալի մասին. դրանք հրատարակվել են «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» շարքով:

Գրքաշարյանը թարգմանել է հին հունական ողբերգակների գործերից. Էվրիպիդեսի «Իֆիգենիան Ավլիսում», Սոֆոկլեսի «Անտիգոնե» պիեսները: Անտիպ են Էվրիպիդեսի «Տրոյացի կանայք», «Հեղինեն», Արիստոֆանեսի «Թռչունները»: Այս թվարկումն էլ ինքնին, կարծում եմ, բավական տպավորիչ է:

Եվ, այնուամենայնիվ, Գրքաշարյանի թարգմանությունների պսակը կազմում է Հոմերոսի մեծ պոեմի՝ «Ոդիսականի» թարգմանությունը: Այս-

տեղ է, որ բանաստեղծ
մանչի նրա տաղանդը
վում է իր ամբողջ
Գրքաշարյանն այստեղ
լուծող-բանաստեղծ է, որ
տիրապետում է բնագրի
վին, գիտի Հին Հունաստ
պատմությունը, և
լեզուն խորապես զգ
բանաստեղծական
երևակայությամբ օժտված
վեստագետ:

Անտիկ գրականության
դեպ նրա սերը ներշն
կում է հայոց հին պատ
թյան գիտական ուսումն

(Շարունակությունը՝ 4-րդ էջ)

ՀԱՅ Է ՆԱ, ՈՎ ՕԳՏԱԿԱՐ Է ՀԱՅՐԵՆԻՔԻՆ



Գյումրի. մտերիմների շրջապատում։

Հռչակավոր կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը հիանալի է ասել. «Հասարակական-քաղաքական կյանքն այսօր այնքան լարված է ու բազմաճյուղ, որ մուտք է գործում մեր գոյության բոլոր ոլորտները և անպայմանորեն շոշափում արվեստը։ Ես համոզված եմ, ժամանակակից արվեստագետը պատասխանատու է այն ամենի համար, ինչ կատարվում է երկրում։ Եթե նա չի տառապում իր ժողովրդի դառնություններով, եթե նա չի ոգևորվում նրա ուրախություններով ու ձգտումներով, արվեստը տեղ չունի»։

Լինելով համամարդկային, Խաչատրյանը միշտ էլ կմնա որպես իր ժողովրդի մեծ զավակը, որը խորապես ազգային էր, ապրում էր հայ ժողովրդի կյանքով, խորապես զգում նրա ճակատագրի դառնություններն ու ուրախությունները։ Լսելով Խաչատրյանի երաժշտությունը, Է. Հեմինգուեյն ասել է. «Ես նրա [illegible] ճանաչեցի Հայաստանը, այն պետք է, որ աշխարհի ամենագեղեցիկ երկրներից մեկը լինի, իմ բարեկամ [illegible] երկրին»։ Խաչատրյանի կյանքի վերջին տարիներին մոտիկից շփվելով կոմպոզիտորի հետ, լսելով նրա երաժշտությունը, ելույթները, զրուցելով նրա հետ, ես նկատել եմ այն համոզմունքը, որ անմահ կոմպոզիտորը մեծ հայ էր, հայկական ոգին, ավանդույթները պահպանող, իր հայրենիքը անսահմանորեն սիրող և նրա համար շատ բան արած մարդ։ «Արամ Խաչատրյանը,— դիպուկ նկատել է Ալեքսեյ [illegible],— խորապես ըզգաց և ըմբռնեց հայ ժողովրդի, ազգի ոգին... Նա հայ երգը իր գեղարվեստական մեծ տաղանդի պրիզմայով անցկացրած ներկայացրեց աշխարհին»։ Ակադեմիայի հիմնադիր անդամ Իսահակյանը գտնում էր, որ Խաչատրյանի ընտրությունը Հայաստանի ակադեմիայի կազմում, խիստ անհրաժեշտ է համազգային տեսակետից։

1963 թ. փետրվարին Խաչատրյանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի և արվեստի ինստիտուտի գիտական խորհուրդների կողմից առաջադրվեց ակադեմիայի իսկական անդամ ընտրվելու թեկնածու։ Այս առաջարկությունը պաշտպանեցին Հայաստանի կոմպոզիտորների միության վարչությունը, Լենինգրադի կոնսերվատորիան, Երևանի կոնսերվատորիայի գիտական խորհուրդը, Հայաստանի պետական պատմական թանգարանի գիտական խորհուրդը։

Խաչատրյանի թեկնածությունն առաջադրելով ակադեմիկոս ընտրվելու համար, նշվում էին նրա ստեղծագործությունների համամարդկային բարձր դրսևորումները, խորապես ժողովրդային, հայկական բնույթը։ Ընդգծվում էր նրա արվեստի մեծ ճանաչումը և բարձր գնահատականը թե՛ մտավորականության շրջանում և թե՛ ժողովրդական լայն զանգվածների մեջ։

1963 թ. մարտին գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը Ա. Խաչատրյանին ընտրեց ՀԳԱ ակադեմիկոս։ Ավելացավ ևս մի աստղ Հայաստանի գիտությունների ակադեմիայի համաստեղության մեջ։ Այդ ժամանակ նա արդեն համաշխարհային ճանաչում ստացած կոմպոզիտոր էր։ Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի և Գնեսինների անվան երաժշտական մանկավարժական ինստիտուտի պրոֆեսոր, բազմիցս ներկայացրել է երկրի երաժշտությունն արտասահմանյան երկրներում։ Նա բազմիցս արժանացել է պետական մրցանակների և շքանշանների, իսկ 1973 թ. նրան շնորհվում է սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

Իր կոմպոզիտորական ստեղծագործությանը զուգընթաց, Խաչատրյանը մշտապես զբաղվում էր նաև երաժշտագիտությամբ, հասարակական աշխատանքով։ Մամուլում տպագրվել են Խաչատրյանի բազմաթիվ և բարձարժեք հոդվածներ, նա ակտիվորեն մասնակցում էր երաժշտության և արվեստագիտության հիմնական պրոբլեմների գիտական մշակմանը։

Հիշում եմ Ա. Խաչատրյանի փայլուն զեկուցումը Ակադեմիայի ընդհանուր ժողովում նվիրված արվեստի ազգային և միջազգային փոխհարաբերություններին։ 1974 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ մեծ կոմպոզիտորին նվիրված ՀԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի արվեստի ինստիտուտի և Հայաստանի կոմպոզիտորների միության միացյալ գիտական նստաշրջանը։ Մոսկվայից, Լենինգրադից, Թիֆլիսից, Տաշքենդից, Ռիգայից, Բաքվից և, իհարկե, Երևանից առաջադրված զեկուցողները բացահայտեցին Խաչատրյանի ներդրումը երաժշտության մեջ, ազգայինի և միջազգայինի փոխհարաբերությունները նրա ստեղծագործություններում։

Արամ Խաչատրյանը խորապես հավատարիմ էր հայ ժողովրդի ոգուն, յուրահատուկ սիրում էր Հայաստանը, հաճախ էր լինում Երևանում, Լենինականում և այլ վայրերում։ Լենինականի քաղաքային խորհուրդը որոշել էր քաղաքի կենտրոնում գտնված Գոզպայի ֆաբրիկայի աշտարակում դնել ժամացույց, կոչային ազդանշաններով (կուրանտներ)։ Այդ կապակցությամբ դիմում ենք Ա. Խաչատրյանին, նա սիրով համաձայնեց և քիչ անց ստացանք երաժշտության նոտաները, նամակով ուղղված այն երաժշտին, որը պետք է ռադիոյով հաղորդեր նրա շեփորներով կատարումը։ Երաժշտության հիմքում վերցված էր լայնորեն տարածված «Կալոսի պտույտ» մեղեդին։ Հիշելով այդ մասին, կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանը գրել է. «Այդ մեղեդին առավելապես համապատասխանում էր կոմպոզիտորի առաջադրած խնդրին։ Խաչատրյանը հիանալի ըմբռնում էր, որ կոչային ազդանշանները պետք է լինեն հակիրճ, այդ պատճառով «Կալոսի պտույտ» մեղեդուց վերցնում է նրա առաջին չորս տակտը, որպես հավելում տալով ևս երկու տակտ և ավարտի յոթերորդ տակտը, ավելացնելով մեղեդու երկրորդ մասին ուղեկցող ձայնով։ Այդպիսով ստեղծվում է տվյալ ժանրի այդ փոքրիկ «գլուխգործոցը»։

Հիշում եմ Արամ Խաչատրյանի զայրույթը, երբ թերթերից մեկը գրել էր, թե իբր Խաչատրյանը հայտարարել է, որ ինքը հայ չէ։ Հուզված պատմելով այդ մասին, նա ինձ կարդաց իր պատասխանը թերթին, որտեղ մասնավորապես թվարկում էր իր կապերը հարազատ Հայաստանի, նրա գործիչների հետ։ «Ես ինձ հայ եմ համարում և հպարտանում եմ դրանով..., Ես եղել եմ, կամ և միշտ հայ կլինեմ... Իմ ուսուցիչներին, բացի ռուսական մեծ կոմպոզիտորներից համարում եմ մեծ Կոմիտասին և Սպենդիարովին, որոնց հետ երջանկություն եմ ունեցել անձամբ ծանոթ լինելու... Ամբողջ աշխարհը գիտե, որ ես հայ եմ, իմ ստեղծագործությունը և ամբողջ գործունեությունը պատկանում է առաջին հերթին իմ հարազատ ժողովրդին և իմ հայրենիքին Խորհրդային Հայաստանին»։

Խաչատրյանը գտնում էր, որ հայ է նա, ով օգտակար է իր հայրենիքին։ Այսպիսին էր ինքը՝ Արամ Խաչատրյանը, մեր ակադեմիայի պատիվ բերող անդամներից մեկը։

Գևորգ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
Ակադեմիկոս

Հայերի ցեղասպանությունը և ժամանակակից թուրք պատմագրությունը

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այսպես, 1918 թ. փետրվարի 27-ին Թուրքիայի ռազմական մինիստր Էնվեր փաշան խիստ գաղտնի հրաման իջեցրեց բանակի բոլոր հրամանատարներին, հայտնելով նրանց կառավարության հետևյալ որոշումը. «1. Երկրի հինգ տարեկանից բարձր բոլոր հայերին, որոնք օսմանյան սուբյեկտ են, պետք է դուրս բերվեն բնակավայրերից և ոչնչացվեն։

2. Բոլոր հայերը, որոնք ծառայում են կայսերական բանակում, պետք է մեկուսացվեն իրենց զորամասերից՝ առանց որևէ աղմուկ հանելու։ Նրանց պետք է տեղափոխել մեկուսացված վայրեր, հեռու հասարակական աչքից և գնդակահարել։

3. Բանակում հայ սպաները պետք է բանտարկվեն իրենց զորամասերի բարաքներում, մինչև հետագա կարգադրությունը»։ Այս հրահանգը պետք է կատարվեր 48 ժամվա ընթացքում։

Լրագրային հոդվածի շրջանակներում բերված այս փաստերն էլ բավական են, հերքելու համար թուրք պատմաբանների «գիտական» եզրահանգումները, թե թուրքական կառավարության «փաստաթղթերից և ոչ մեկում հիշատակություն չկա «կոտորածի» կամ «ցեղասպանության» մասին։

Թուրք պատմաբանները աշխատում են նույնիսկ մոռացության տալ Թուրքիայի ռազմական տրիբունալի 1919 թ. հուլիսի 6-ի որոշումը, որով Թալեաթը, Էնվերը, դոկտոր Նազիմը և Ջեմալը, որոնք 1918 թ. նոյեմբերի 30-ին Մուդրոսում կնքված զինադադարից հետո փախել էին Թուրքիայից, դատապարտվեցին մահվան, որպես Թուրքիան պատերազմի մեջ ներքաշած և հայերի կոտորածները կազմակերպած հանցագործների։

Հայերին որպես բարձրագույն մեղադրանք է ներկայացվում այն փաստը, որ նրանք, ինչպես գրում է Սալահին, մերժեցին թուրքական կառավարության առաջարկը հանդես գալու Ռուսաստանի դեմ, ինչի դիմաց խոսք էր տրվում արևմտահայերին ինքնավարություն շնորհել (էջ 289—290)։

Հայերի ցեղասպանությունը թուրք պատմաբանների կողմից դիտվում է որպես պատասխան նրանց կողմից թուրքական կառավարության դեմ բարձրացրած ապստամբությունների։ Այս կեղծիքը ժամանակին մերկացրել է Վիկոնտ Բրայսը։ 1915 թ. հոկտեմբերի 6-ին հանդես գալով Անգլիայի լորդերի պալատում, նա հայտարարել է. «Հայերի ապստամբությունները հանդիսանում են մի քաղաքականության հետևանք, որը... նախօրոք կանխամտածված է եղել բանդիտների կողմից, որոնք այժմ գտնվում են թուրքական կայսրության ղեկավարությունում»։

Թուրք պատմաբանները իրենց հորինած մի կեղծիքը «հիմնավորելու» համար դիմում են մի այլ կեղծիքի։ Նրանք Արևմտյան Հայաստանում հայերի թվաքանակի մասին ոչ հավաստի աղբյուրներից քաղված տվյալների ձեռնածության միջոցով փորձում են ժխտել, որ Արևմտյան Հայաստանում ապրել են շուրջ երկու և կես միլիոն հայեր և թուլացնել ցեղասպանության ահագնությունը։

Այսպես, օրինակ, Սալահին պնդում է, թե 1915—1916 թվականներին հայերի կրած զոհերի ընդհանուր թիվը չի անցնում 300 հազարից, որոնց մեծ մասը, ըստ նրա, զոհվել են երկրում տիրած սովի, հիվանդությունների, դեղորայքի պակասի, կլիմայական պայմանների, ինչպես նաև թուրքական բանակի հետ ունեցած ռազմական ընդհարումների ժամանակ, իսկ կենդանի մնացած 1 միլիոն հայերը գաղթել են այլ երկրներ (էջ 300—301)։

Զարգացվում է մի վարկած ևս, ըստ որի «հայերի գործողությունների հետևանքով» սպանվել են մեկ միլիոն մահմեդականներ։ Սալահին «զարմանք» է հայտնում, որ 300 հազար հայերի մահը դիտվում է որպես ցեղասպանություն, իսկ հայերի կողմից սպանված մեկ միլիոն մահմեդականների մասին նույնիսկ չի հիշատակվում (էջ 301—302)։

Բավական է, սակայն, հիշատակել դոկտոր Լեպսիուսի՝ բազմաթիվ ստույգ տեղեկությունների հիման վրա 1915 թվականին կազմված տվյալները, որպեսզի մերկացվեն թուրք պատմաբանների կեղծիքները։

Ըստ Լեպսիուսի միայն 1915 թվականին տեղահանվել կամ սպանվել են Կիլիկիայում և Սիրիայում 238 հազ. 950 մարդ, Արևելյան Անատոլիայում 817 հազ. 600 մարդ, Արևմտյան Անատոլիայում 309 հազ. 800 մարդ, Եվրոպական Թուրքիայում 30 հազ. մարդ, ընդհանուր առմամբ՝ մեկ միլիոն 396 հազ. 350 մարդ։

Այս թվերի մեջ ներառված չեն այն հայերը, հատկապես փոքրահասակները ու դեռահասները, որոնք բռնի մահմեդականացվել են, այն աղջիկները ու երիտասարդ կանայք, որոնց, պոկելով իրենց ընտանիքներից, թուրքական փաշաների հարեմներն են դարձրել։ Հայ ժողովուրդը չի կարող մոռանալ նաև Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսում, 1909 թվականին Ադանայում, ինչպես նաև 1918—1920 թթ. Անդրկովկասում տեղի ունեցած կոտորածների ժամանակ հարյուր հազարավոր հայերի նահատակությունը։

Հայ դատի պաշտպանությունը համազգային խնդիր է։ Հատկապես մեծ անելիքներ ունեն պատմաբանները։

Անհրաժեշտ է ուսումնասիրել եվրոպական երկրների և ԱՄՆ-ի արխիվներում պահվող այն նյութերը, որոնք վերաբերում են Հայկական հարցին և սփյուռքահայ պատմաբանների հետ միասին ստեղծել թուրք պատմաբանների կեղծիքները մերկացնող նոր աշխատություններ, ինչպես նաև կազմել փաստաթղթերի ժողովածուներ և հրատարակել օտար լեզուներով։ Իսկ մինչ այդ անհրաժեշտ է անգլերեն թարգմանել ակադեմիկոս Մ. Ներսիսյանի խմբագրությամբ դեռևս 1966 թ. հրատարակված «Գենոցիդ արմյան վ օսմանսկոյ իմպերիի» փաստաթղթերի և նյութերի արժեքավոր ժողովածուն, ինչպես նաև արագացնել պատմական գիտությունների դոկտոր Վ. Միքայելյանի՝ գերմանական արխիվներից հավաքած փաստաթղթերի և նյութերի ժողովածուի հրատարակումը։

Այս հարցերի լուծումը ՀՀ ԳԱԱ առաջնահերթ խնդիրներից մեկն է։

ՄԵԿ ՏԱՐՈՒՄ...

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ, ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Բաժանմունքի կազմում եղել են Մեխանիկայի, ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների, հատուկ կոնստրուկտորական տեխնոլոգիական ինստիտուտները, ճարտարագիտական կենտրոնը, կոմպոզիցիոն նյութերի ՀԿՏԲ-ն և հիդրոմեխանիկայի ու վիբրոտեխնիկայի բաժինը։

1993 թ. անց է կացվել բաժանմունքի 3 ընդհանուր ժողով և բյուրոյի 12 նիստ։

Մայիսի 31-ին կայացած բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովում քննարկվեցին 1992 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքները։ Բաժանմունքի բյուրոյի անդամ և ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար ընտրվեց թղթ. անդամ Վ. Ս. Սարգսյանը։

Մյուս երկու ժողովներում (12.03, 6, 10) անցկացվեցին երկու ինստիտուտների տնօրենների ընտրությունները։ Մեխանիկայի ինստիտուտի տնօրեն ընտրվեց ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր Լ. Ա. Աղալովյանը, ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն՝ թղթ. անդամ Յու. Հ. Շուքուրյանը։

Բաժանմունքի բյուրոյի նիստերում լսվել են ինստիտուտների տնօրենների զեկուցումները ինստիտուտների գործունեության մասին, «Մաթեմատիկա, մեխանիկա, ինֆորմատիկա» փորձագիտական խորհրդի աշխատանքի արդյունքները, փորձագիտական խորհուրդների կանոնակարգի նախագիծը, ՀՀ ԳԱԱ նոր օրենսդրության նախագիծը, արտասահմանյան երկրների հետ գիտական համագործակցության հարցերը, ՀՀ ԳԱԱ 50-ամյակին նվիրված ժողովածուի նյութերը, ՀՀ գիտության զարգացման հայեցակարգի նախագիծը։

Մշակվել են առաջարկություններ՝ ինֆորմատիկայի, մեխանիկայի և էներգետիկայի բնագավառում հիմնարար հետազոտությունների ծրագրերի վերաբերյալ։

Բաժանմունքի բյուրոյի անդամները մասնակցել են ինստիտուտների գիտական խորհուրդների նիստերին, ուր լսվել են թեմաների ղեկավարների հաշվետվությունները 1993 թ. հետազոտությունների արդյունքների մասին։

ՄԵԿ ՏԱՐՈՒՄ...

ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Բաժանմունքի կազմում 1993 թ. եղել են ընդհանուր և անօրգանական քիմիայի, քիմիական ֆիզիկայի, օրգանական քիմիայի, Հ. Խ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի, Երկրի մասին գիտությունների սեկցիայի երկրաբանական գիտությունների և երկրաֆիզիկայի ու ինժեներային սեյսմաբանության ինստիտուտները, Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը, Գառնիի երկրաֆիզիկական դիտարանը։

Հաշվետու տարում կայացել է բաժանմունքի տարեկան 4 ընդհանուր ժողով։ Մայիսի 31-ի ընդհանուր ժողովում ամփոփվեցին 1992 թ. բաժանմունքի ինստիտուտների և բյուրոյի գիտական ու գիտակազմակերպական գործունեության արդյունքները։

Ապրիլի 12-ին բաժանմունքի ընդհանուր ժողովում անց է կացվել երկրաբանական գիտությունների ինստիտուտի (հ.ե. գիտ. դոկտոր Ռ. Տ. Ջրբաշյան), երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտին առընթեր Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի (ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու Լ. Ա. Հախվերդյան), Երկրաբանական գիտությունների ինստիտուտին առընթեր Էկոլոգանոոսֆերային ուսումնասիրությունների կենտրոնի (հ.ե. գիտ. թեկնածու Ա. Կ. Սաղաթելյան) տնօրենների ընտրությունները։

Հոկտեմբերի 5-ին բաժանմունքի ընդհանուր ժողովում տեղի ունեցավ կենսաքիմիայի (ակադ. Ա. Ա. Գալոյան) և օրգանական քիմիայի (քիմ. գիտ. դոկտոր Շ. Հ. Բադանյան) ինստիտուտների տնօրենների ընտրությունները։

Նոյեմբերի 8-ին բաժանմունքի ընդհանուր ժողովում քննարկվեց ՀՀ ԳԱԱ նոր օրենսդրության նախագիծը։ Միաձայնությամբ, բաժանմունքը գտավ ոչ նպատակահարմար՝ կենսաբանական, քիմիական գիտությունների բաժանմունքների և Երկրի մասին գիտությունների սեկցիայի միավորումը մեկ բաժանմունքում, որը կմիավորի 15 ինստիտուտ, 2 կենտրոն, 4 ՀԿԲ և 1 փորձնական գործարան։ Բաժանմունքը անհրաժեշտ է համարել վերականգնել Երկրի մասին գիտությունների բաժանմունքը։

Առաջարկվեց բաժանմունքին կից ստեղծել մասնագիտացված պրոբլեմային խորհուրդներ, որոնք օժտված կլինեն որոշակի իրավունքներով։

Հաշվետու տարում տեղի է ունեցել բաժանմունքի բյուրոյի 20 նիստ, որոնցում քննարկվել և հաստատվել են քիմիական ու երկրաբանական գիտությունների կարևորագույն ուղղությունների հիմնարար հետազոտությունների ծրագրերը, առաջարկությունները պրոբլեմային փորձագիտական խորհուրդների կանոնակարգի վերաբերյալ, քննարկվել են արտասահմանյան երկրների հետ գիտական համագործակցության հետ կապված [illegible]

Ջրի բերած, ջրի տարած միլիոնները...

Հանրապետությունում հանքային ջրերի արդյունավետ օգտագործման և նրա արտահանման խնդիրը վաղուց է հասունացած։ Այդ մասին շատ է գրվել, եղել են առաջարկություններ, սակայն հարցի լուծման պայմաններ չեն ստեղծվել։

Հաշվարկները ցույց են տալիս, որ եթե գիտական տվյալների հիման վրա ներդրվեն ժամանակակից տեխնոլոգիական գծեր, ապա միայն «Արզնի» հանքային ջրերի վերամշակումից և արտահանումից կստացվեն այնքան մեծ օգուտներ, որոնք արժանապես կբարելավեն հանրապետության էկոնոմիկայի դեմքը։ Այդպիսի եզրակացության է եկել ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրաբանական գիտությունների բաժանմունքը, որտեղ կատարվել է Արզնու հանքային ջրերի և ածխաթթու գազի արդյունավետ օգտագործման հարցի մանրակրկիտ քննարկումը համապատասխան մասնագետների և շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ։

Հարցի էությունն այն է, որ միայն Արզնու հանքային ջրերի գործարանում օրական դեբիտը կազմում է շուրջ 1500 խմ։ Այդ նույն տեղում ընդերքից դուրս է գալիս նաև ածխաթթու գազ— 3 մթն. ճնշման տակ։ Ի դեպ, անջատված ածխաթթու գազն իր մաքրությամբ բավարարում է սննդարդյունաբերության պահանջները, որով ավելի է բարձրացնում նրա արժեքը և ընդլայնում օգտագործման ոլորտները։ Ցավոք, այսօրվա դրությամբ թե՛ հանքային ջրի և թե՛ ածխաթթու գազի օգտագործման աստիճանը չի անցնում համապատասխանաբար՝ 2 և 0,2 տոկոսից։

Համոզված ենք նաև, որ դրական ոչինչ չի կատարվի, եթե հարցի լուծումը չունենա խորը գիտական և ժամանակակից տեխնիկական լուծում։

Այստեղ կարևոր է նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր հանքային ջուր ունի իր առանձնահատկությունը և պահանջում է յուրովի մոտեցում, մշակելով տվյալ ջրի արտահանման համար համապատասխան տեխնոլոգիա, պահպանելով միջազգային ստանդարտի պահանջները։

Նշված հանքային ջրի լայն արտահանման համար անհրաժեշտ է լուծել մի քանի սկզբունքային խնդիրներ, առանց որի հաջողության հասնելը հնարավոր չէ։ Ստորև բերվում են այդ խնդիրները և դրանց լուծման մեր տեսակետները։

1. «Արզնի» հանքային ջուրը ունի աղերի մեծ պարունակություն— 15 գր/լ, որը շուրջ 3 անգամ ավելի է միջազգային նորմերով թույլատրված քանակներից։ Այս խնդիրը կարող է ունենալ երկու տարբերակով լուծում, կամ նոսրացնել թորած ջրով (սովորական խմելու ջրով չի կարելի), ավելացնելով նրա քանակը երեք անգամ և մտածել այդ քանակի տարավորման մասին, կամ ավելորդ քանակի աղերը դուրս հանելով, ստանալ նույն քանակի նորմալ հանքային ջուր և առանձին չոր աղ։

Միանգամայն պարզ է, որ ամենաարդյունավետ է երկրորդ տարբերակը։ Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ունենալ վակուում-գոլորշիացուցիչ ապարատներից բաղկացած տեխնոլոգիական գիծ, որը փաստորեն համընկնում է կաթի փոշու ստացման տեխնոլոգիայի հետ։ Այդպիսի գծեր արտադրվում և վաճառվում են շատ երկրների, այդ թվում Ռուսաստանի Դաշնության կողմից։

Նշված տեխնոլոգիայի իրականացումով օրական կստացվի 1500 խմ աղերի 5 գր/լ պարունակությամբ հանքային ջուր և 15 տ աղ, որը նույնպես ենթակա է արտահանման։

2. Իրագործել բնական ածխաթթու գազի հեղուկացումը, որը միանգամայն հնարավոր է կատարել տեղական միջոցներով։ Ստացված հեղուկ ածխաթթու գազն առաջին հերթին կօգտագործվի սննդի արդյունաբերության մեջ տարբեր տեսակի կերերի և պահածոների պահպանման, ըստացված հանքային ջրերի և այլ նյութերի կարբոնիզացման և ուրիշ նպատակների համար։ Այս հարցում առկա են որոշակի խնդիրներ՝ կապված միջազգային ստանդարտով ածխաթթու գազի մաքրության պահպանման հետ, սակայն կուտակված գիտատեխնիկական պոտենցիալը թույլ է տալիս լուծելու դրանք, օգտագործելով տեղական ադսորբենտներ։

3. Լուծել ստացված հանքային ջրի տարավորման հարցը, որը բոլոր ժամանակներում եղել է ամենադժվարին և գործնականում լուծում չգտած պրոբլեմ։

Դժվար չէ համոզվել, որ նման քանակի հանքային ջրի տարավորումը ապակյա շշերում, հեռու է իրականությունից։ Պահանջվող քանակի ապակյա զանգվածի ստացումը հնարավոր չէ ապահովել ոչ անհրաժեշտ քանակի կալցինացված սոդայով և ոչ էլ բնական գազով կամ դրան համարժեք քանակի մազութով, չխոսելով մնացած բաղադրամասերի և նոր արտադրական հզորությունների կառուցման, ծախսերի և բարդությունների մասին։ Եթե այսօր հարցը դրված լինի այնպես, որ անպայման անհրաժեշտ է տարավորումը կատարել՝ ապակյա շշերով, ապա դա կնշանակի խնդրի լուծումը հետաձգել անորոշ ժամանակով։

Տնտեսապես ավելի ձեռնտու է հանքային ջրերի տարավորումը կատարել պոլիմերային նյութերով, որոնք թույլատրված են օգտագործելու սննդարդյունաբերության մեջ, որոնց թվին է պատկանում նաև պոլիէթիլենթերեֆթալատը (ՊԷԹ)։

Ներկայումս ՊԷԹ— տարբեր տարողության շշերի արտադրությունը և հանքային ջրերի համար օգտագործումը լայն կիրառություն ունի աշխարհի շատ երկրներում (ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա, Ավստրիա և այլն), որոնք վաճառում են պատրաստի տեխնոլոգիական գծեր, երաշխավորելով ածխաթթու գազի մինչև 5 գ/լ պարունակություն։

Նման շշերի արտադրությունը հանրապետությունում անհրաժեշտ է ոչ միայն հանքային ջրերի, այլև ուրիշ տեսակի հեղուկների տարավորման համար։

Սկզբունքորեն կարելի է ՊԷԹ-ի փոխարեն օգտագործել այլ տիպի սննդային պոլիմերային նյութեր, սակայն մենք շեշտը դնում ենք ՊԷԹ-ի վրա, որովհետև նրա արտադրության համար հանրապետությունն ունի պոտենցիալ հնարավորություններ։ Մյուս կողմից ՊԷԹ—պահանջարկը տեղում անչափ մեծ է, այն կարող է լայն կիրառություն ունենալ կաթի, դոնդողի, լուսամուտների արտադրություններում և այլ տեսակի տարաների համար։

Տնտեսապես միանգամայն արդարացված է գնել ՊԷԹ-ի շշերի արտադրության պատրաստի տեխնոլոգիական գիծ, և աշխատել առայժմ բերովի հումքով։ ՊԷԹ-ից հանքային ջրերի տարավորման նպատակով, ինչպես ասվեց վերևում, արտասահմանյան շատ ֆիրմաներ վաճառում են պատրաստի տեխնոլոգիական գծեր, որոնց արժեքը՝ կախված ածխաթթու գազի պարունակությունից և շշերի չափերից, տատանվում է որոշ սահմաններում։ Ընդհանուր պատկերացման համար նշենք, որ բոլոր օպերացիաները կատարող տեխնոլոգիական գծի արժեքը կազմում է շուրջ 3 մլն ռ.՝ 1994 թվականի տվյալներով, որի ժամվա արտադրողականությունը կազմում է շուրջ 5000 հատ՝ 1,5 լիտրանոց շիշ։

Միանշանակ է, որ հանքային ջրերի արտահանման հիմնական պրոբլեմը կապված տարավորման հետ, պետք է լուծել պոլիմերային նյութերը, իսկ առաջին հերթին ՊԷԹ-ի միջոցով, որի 1,5 լիտրանոց շիշը կշռում է ընդամենը 50 գ։ Սակայն բացառված չէ նաև, որ որոշ քանակ արտահանվի նաև ապակյա շշերով, երկաթգծային ցիստեռններով, կամ ավելի մեծ՝ 5—20 լիտրանոց պոլիմերային տարաներով։ Այս և մի շարք այլ կարևորագույն հարցերի լուծումը կապված է սպառողի կողմից ներկայացվող պահանջների հետ, իսկ դա նշանակում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է կատարել մարկետինգ՝ հայտնաբերելու սպառման շուկա և հետո մնացածը հարմարեցնել շուկայի պահանջին։

Հանքային ջրերի լայն արտահանումը պետք է դառնա հանրապետության էկոնոմիկայի զարգացման առաջնահերթ ուղղություններից մեկը, ճիշտ այնպես, ինչպես նավթը Ադրբեջանում և միջինասիական երկրներում։ Կասկածից վեր է նաև այն, որ նման ծավալի գործընթացում անհրաժեշտ է ունենալ ամուր գիտահետազոտական հիմքեր, որովհետև առկա են բավական լուրջ խնդիրներ, որոնք պահանջում են ստույգ լուծումներ։ Այդ գործում մեծ դեր է պատկանում քիմիկոսներին, երկրաբաններին, առողջարանային մասնագետներին, տնտեսագետներին, առավել ևս մարկետինգով զբաղվողներին և, մեր կարծիքով, այս ամենը պետք է իրենց ուրույն տեղը գտնեն հանրապետության պարենի և մթերումների նախարարության գործունեության ծրագրում։ ՀՀ ԳԱԱ կողմից այս ուղղությամբ ներկայացված գիտականորեն հիմնավորված ծրագրին, որի կատարման համար հայտնել էր նաև իր ծառայությունը, նախարարությունը պատասխանել է. «Այդ բոլորը մենք գիտենք»։ Պետք է ուրախ լինել, որ նախարարությունը խորապես տիրապետում է իրադրությանը և քաջատեղյակ է բոլոր տեսակի գիտական և ինժեներական պրոբլեմների լուծման ուղղությամբ հանրապետությունում կուտակված պոտենցիալին և սպասվելիք անելիքներին։ Բայց մի՞թե դա այդպես է։ Եթե այո, ապա ինչու՞ սայլը տեղից չի շարժվում և միլիոնավոր դոլարներ չեն մտնում հանրապետության գանձարանը, իսկ եթե ոչ, ապա մեկնաբանությունները ավելորդ են։

Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

Ս. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի [illegible]

Հին և նոր աշխարհների ճամփաներով

Վան. քաղաքի միջնաբերդը։

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

րության, որով արդեն տասնամյակներ շարունակ զբաղվում է Գրքաշարյանը։ Հին հայկական քաղաքները, մեր պետականության հնագույն շրջանը— ահա այն գլխավոր խնդիրները, որոնք գտնվում են պատմաբան Գրքաշարյանի ուշադրության կենտրոնում. Նրա ուսումնասիրությունների արդյունք են «Դրվագներ Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության» մենագրությունը և բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք հրապարակվել են Հայաստանի գիտական մամուլում։ Այսօր Գրքաշարյանը ղեկավարում է գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի հայոց հին պետականության ուսումնասիրության խումբը։

Եվ այսպես, Գրքաշարյանի գիտական և թարգմանչական հետաքրքրությունների շրջանակը կապված է հին աշխարհի՝ անտիկ Հունաստանի և հին Հայաստանի հետ (թեև, չմոռանանք, նա թարգմանել է նաև հույն ժամանակակից հեղինակների գործեր)։ Բայց իբրև մարդ, նա սերտորեն կապված է իր ժամանակի, մեր բոլորիս ապրած ժամանակի հետ, դժվարին, ողբերգական 20-րդ դարի հետ։ Անտարբեր չէ հասարակական, գրական, գիտական կյանքի ոչ մի կարևոր խնդրի նկատմամբ, կրքոտ վիճաբանող է։ Արդյունքն եղել է ամբողջ կյանքում։ Ինքը շատ քիչ է հիշում, բայց պատանեկության տարիներին մասնակցել է Հունաստանի դիմադրական շարժմանը, կռվել պարտիզանական ջոկատում։ Հայրենադարձվելուց հետո Հայաստանում դառնություններ շատ է տեսել։ Բայց վիրավորանք չի պահել հայրենիքի հանդեպ, արմատներ է նետել Հայաստանում, և անհնար է նրան պատկերացնել Հայաստանից դուրս, ինչպես և անհնար է մեր այսօրվա մշակութային, գրական կյանքը պատկերացնել առանց Գրքաշարյանի։ Ծրագրեր ունի, չհրատարակված թարգմանություններ ունի, որոնց թվում՝ հին հունական արձակի հուշակավոր երկերից մեկը՝ Քսենոփոնի «Կյուրոպեդիան», և հուսանք թարգմանչի հետ միասին, որ այդ գրքի հրատարակության համար միջոցներ կգտնվեն։

Կայուն, ամբողջական, իր իդեալներին հավատարիմ մարդ է Սիմոն Գրքաշարյանը։

Մի քանի տարի առաջ Իտալիայից նամակ ստացավ Հռոմի «Տիբերինա» ակադեմիայի անդամ ընտրվելու մասին, որ վկայությունն է նրա գործի միջազգային ճանաչման։ Ինչքան գիտեմ, այնպես էլ հնարավորություն չունեցավ այդ ակադեմիայի ժողովներին մասնակցելու)։ Բայց Սիմոն Գրքաշարյանի նման մարդու համար սրանք միայն մանր խնդիրներ են։ Անքակտելիորեն կապված է իր գործին ու կյանքին և դրա համար էլ երիտասարդ է մնում։

Ազատ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Էտյուդներ գիտնականնե կյանքից

ԼԵՈՆԱՐԴ ԷՅԼԵՐ.— տերինա 2-րդը մահացավ այն օրը, երբ նա ոտք Ռուսաստանի հողը, խ լերին հրավիրել էր թագ Ծփոթահար ու մտահոգ լերը որոշում է թողնել թեմատիկան և ընդունվել ռայության նավատորմում։ Լեոնարդը շվեյցարացի բայց նա ռուս գիտնակա համարվում, իր իսկ խո վանությամբ՝ «Ամեն ի պարտական եմ Պետերբո ակադեմիային...»։

Պետերբուրգում Լեոն Էյլերը դարձավ մաթեմա կայի պրոֆեսոր։ Նա գր մոտ 700 աշխատություն։ սագիրները, խոսելով մաթեմատիկական երկերի սին, հատուկ նշում են, որ ֆերենցիալ և ինտեգրալ հ վի մեջ իրենք թերևս ա ջին՝ անգամ են զգում Ո խոսքի «գեղեցկությունը»։ լերի մաթեմատիկական հայ նագործություններից շատ անփոփոխ մտել են դասագ քերի մեջ։ Հավանաբար ո շնչման պահին նրան հ մակած զգացմունքներն ա լի հարազատ են եղել եր ժշտին, քան գիտնական Եվ, իզուր չէ, որ նրա աշխա տությունները ունեն դասակ կատարելություն։

Պետերբուրգում այնքան հանգիստ չէր մեծ գիտնակա նի կյանքը... Նա ուներ 1 զավակ, երեսունից թոռ, բայց հանգամանքներն ստիպեցի նրան մեկնել Բեռլին։ Արդ էլ մթնոլորտը անտանելի և Էյլերը ստիպված կրկին վ րադառնում է Պետերբուր Շատ չանցած, նա կուրանո է և հինգ տարի հետո հրդ հի բոցերում մոխրանում է ն րա տունը ու միայն հրաշք փրկվում են ձեռագրերը։

Հենց այդ տարիներին բաց տի քմահաճույքով նա հրա տարակում է «Օպտիկայի» հատորները։ Նա ուսումնաս րում է Վեներայի և Լուսն շարժումը, աշխատություն գրում երաժշտության տեսու թյան մասին, ուսումնասիր է լարերի տատանման և հ ղուկների շարժման հարցեր

1783-ին, սեպտեմբերի 7-ին Էյլերը թեյ էր խմում ու խ ղում թոռների հետ, բայց հան կարծ ձեռքից գցեց ծխամոր ճը և հազիվ հասցրեց բացա կանչել. «Մեռնում եմ»։ Գի տության պատմաբան Կոն դորսեն հետագայում կգրի վավոր դարձած իր խոսքը՝ «Էյլերը դադարեց ապրել հաշվարկել»։

ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ՀՈՂ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ

...Իսկ ինչ կասեն գիտնականները

Ճանապարհն իջնում է ձորերն ի վար, թեքվում ձախ, անցնում գարնանային ձնհալից գազազած գետի վրայով, թեքվում աջ, բարձրանում ձորն ի վեր, թեքվում ձախ ու լեռների միջով, հարթությունների վրայով ձգվում հեռուները։ Կանգնած ձորի պռնկին, հետաքրքիր հայացք եմ նետում անցած ճանապարհին։ Մի քանի քայլի վրա՝ Գառնիի հեթանոսական տաճարն է, Գառնի գյուղը, որի տներն ասես հեղեղ, ծածկել են տափարակը, եկել հասել ձորաբերանին, ու լըցվելու ձորը։ Գյուղը մեծանալու, ընդլայնվելու ափեր է որոնում, ջահելները ընտանիք են կազմում, օջախները բազմանում են, իսկ հողը և աշխատանքի հնարավորությունները մնում են նույնը։ Իսկ ձորը Ազատ գետով տրամաբանական սահման է. այն կողմ անցնելու տեղ չըկա։ Սկսվում է Արտաշատի շրջանը՝ այս կողմ՝ Կոտայքի։ Բայց այս կողմում ոչ հող կա, ոչ էլ ջուր։ Այն կողմում տասնյակ կիլոմետրեր լքված հողերն են, մոռացության մատնված այգիներ, ընկուզենու, խաղողի, այլ պտուղների վայրենացած ծառաստաններ, առուներ, գետակ, ջրբաժան կայան։ Այս կողմ՝ տասնյակ ու հարյուրավոր երիտասարդ մարդիկ են, որ հարսանեկան հոխ հանդիսություններից հետո, սեփական հողակտոր ու հարկ ստեղծելու, ունենալու ակնկալիքով նայում են մյուս կողմ։ Ձորը խորն է, նրա երկու ափերը ահարկու երկրաշարժից առաջացած խզվածքի հետևանքով հեռացել են իրարից։ Չլիներ այդ խզվածքը, դժվար է ասել, թե երկու շրջանների սահմանը որտեղով կանցներ։ Իսկ առայժմ այն անցնում է անդնդախոր ձորով։

Ու թող ոչ ոքի տարօրինակ չթվա, որ ձորով սահմանակից երկու շրջանները միացնող միակ ճանապարհն անցնում է... միլիոնանոց Երևանի միջով։ Եթե Արտաշատից տրակտոր կամ բուլդոզեր պետք է հասնի Գեղմահովտի իր տարածքը, ուրեմն այն պետք է անցնի Արտաշատ—Երևան երթուղին, մտնի մեր մայրաքաղաքը, անցնի երևանյան բանուկ փողոցներով ու մի աղմուկ էլ ավելացնի հոգնաշատ քաղաքին, հասնի Նոր Նորքի զանգված, գնա Ջրվեժ՝ հետո՝ Գառնի, մտնի երկրի կեղևի ճեղքվածքը, բարձրանա ձորն ի վեր, գնա, գնա էլ տասնյակ կիլոմետրեր ու հասնի Գեղմահովտի դաշտերը։

Մինչև ֆերմա հասնելը լքված, կիսավեր գյուղ ենք տեսնում, որ մի ժամանակ Բայբուրդ էր կոչվում։ Բնակիչները, որ իրենց ասելով Նախկին Բայբուրդից էին, գաղթել են։ Բայց նրանց օրոք էլ մի առանձնակի շինություն չկար։ Կիսագետնափոր, ավերակ գյուղ էր՝ իր 5-րդ դարի բազիլիկով։ Այ քեզ հրաշք. ուրեմն այստեղ կյանք է եղել, մի՞թե այդ չեն վկայում տասնյակ կիլոմետրերով ձգվող, ցանկապատերով (որոնց միայն հետքերն են մնացել) բաժանված դարավոր ընկուզենիների, խաղողի այգիները։ Քիչ այն կողմ Խոսրովի անտառն է, արգելանոցը, որը տարիներ շարունակ տարբեր խոսակցությունների ու վեճի առարկա է դարձել։ Մարդիկ հող են ուզում, իսկ երկիրը պետք է ունենա նաև արգելանոց ու բնության հուշարձան։

Ուրեմն, ի՞նչ անել...

Մենք թողնում ենք 5-րդ դարի բազիլիկ եկեղեցին, ու մեր ճանապարհը շարունակում հարազատ, բայց ամայի ճամփերի միջով։ Հեռվում բնակավայրերի հետքեր ենք նկատում. քարակույտերը վկայում են, որ դրանք մի ժամանակ բնակարաններ են եղել, իսկ բոլոր քարակույտերը միասին՝ գյուղ։ Ո՛չ, այս հուշարձանները պատմության հեռաստաններին չեն պատկանում։ Դրանք 30—35 տարվա կենսագրություն ունեն և զարմացնում են իրենց, առաջին հայացքից, անզանազանելիությամբ։ Հիմա ո՞վ կարող է ասել, թե այստեղ ոչ թե մեկ, այլ մեկ տասնյակից ավելի շեն գյուղեր են եղել, որոնք կամաց-կամաց դատարկվել են՝ փոքր ու միջին գյուղերի վերացման գնով տնտեսությունների խոշորացման (ոչ արդարացված) կամպանիայի ժամանակ։ Այո՛, կամպանիա, քանի որ գյուղերի ճակատագրի նկատմամբ նման վերաբերմունքը պատճառաբանված չի եղել ո՛չ տնտեսական՝ և ո՛չ էլ գիտական առումով։ Իսկ գյուղերը դատարկվել են։

Հիմա էլ քշքշացող գետակի ափերին, տասնյակ կիլոմետրեր ձգվում են ընկուզենիներ։ Ովքե՞ր են հավաքում բերքը։ Նույն գետակի ջրերով փարթամորեն աճած խաղողի այգիները մնացել են անմշակ, դարձել են վայրի։ Լեռնալանջերը մերկ են, արոտավայրերը տարիներ շարունակ չեն նորոգվել, չեն մշակվել և այժմ հազիվ կարող են կերակրել ոչխարի ոչ մեծ հոտ։

Կանգնած ենք ճամփաբաժնին և մտածում՝ ո՞ր կողմը գնալ։ Հիշեցինք հանրաճանաչ հեքիաթների երեք դյուցազուններին և երեք ճամփաները։ Մի տարբերությամբ, որ մենք մեզ հեքիաթի դյուցազուն չէինք համարում և երկրորդը՝ հեքիաթի բոլոր ճամփաների վրա քարե ցուցանակներ կային, իսկ Հազարաձորում ոչ քարից կան, ոչ էլ՝ փայտից։

Որոշեցինք գնալ պատահականորեն ընտրած որևէ ճանապարհով։ Դեմ առանք մեծ ձորակի. շարժվելու տեղ չկար։ Հաջորդ ճամփան. մեզ տարավ մի շինության մոտ, որտեղ թեև մարդ չըկար, բայց զգացվում էր, որ մարդու ձեռքով ստեղծված ջրբաժան կայան է։ Հետո մենք հազիվ կարողացանք անցնել դեպի Կաքավաձոր (Նախկին) գնացող ճամփի կեսը, մի արահետ մեզ կարող էր տանել Երանոս (Նախկին), բայց, ավա՜ղ, արահետը կորավ քարափների մեջ։ Հետո որոշեցինք գնալ Գոլյասոր (Նախկին), բայց վերադարձանք ձորի մոտից. այն կողմ որևէ ձևի ճանապարհ կամ արահետ չկար։ Վերջապես. գտանք Գեղմահովտի տարածքը։ Մի քանի մարդիկ, թեև սիրալիր, բայց զարմանքով ողջունեցին մեզ։ Մենք գտնվում էինք Արտաշատի շրջանում։ Մտովի ուզում ենք պատկերացնել հանրապետության քարտեզը և ճշտել մեր գտնվելու վայրը։ Ճշտում ենք. Հազարաձորի հիանալի հողերն ու այգիները (լքված) և Գեղմահովտի ոչխարաբուծական ֆերման (մի կերպ յոլա գնացող) գտնվում են Գառնիից արևելք, Գեղամա լեռներից հարավ, որտեղից յոթ սար ու ձոր այն կողմ՝ Արտաշատի շրջանն է։ Տեղանքը ճշտելու մեր ուրախությունից հետո, մեզ սպասում էր հաջորդ հաճելի անակնկալը։ Գեղմահովտի տնտեսության մարդիկ ոչ միայն ապրում են այսօրվա գյուղի բոլոր հոգսերով ու գործերով, այլև ունեն կոնկրետ ծրագրեր՝ հին հողը վերածնելու, ծաղկած մի այգեստան դարձնելու ուղղությամբ։ Մենք ակտիվորեն մտնում ենք գեղմահովտցիների հետ զրույցի և մտքերը, ծրագրերը, հեռանկարները ձուլվում են իրար, գրավում նաև մեր մտքերը, ու ամայացած վայրերում տեսնում ենք նրա վաղվա օրը։

Ոչխար պահելը թեև եկամտաբեր է, բայց այս հողի համար նպատակահարմար չէ։ Մինչդեռ այս հոյակապ սարալանջերը կարելի է վերածել խաղողի դարավանդային այգիների, որոնք իրարից անջատված կլինեն պտղատու, մանավորապես՝ ընկուզենու այգիներով։ Ապագա տնտեսությունները կունենան կովաբուծական խոշոր ձեռնարկություններ, որոնք մեծ արոտավայրերի կարիք չեն ունենա և չեն վնասի Խոսրովի անտառին։ Հազարաձորի բանջարանոցների ու այգիների տված բերքի բազայի վրա կաշխատեն պահածոյի և գինու գործարաններ, որոնք վաստակով կապահովեն գյուղատնտեսական հիմնական աշխատանքներից դուրս մնացած մարդկանց։ Ո՞ր մարդկանց,— հավանական է կըհարցնի ընթերցողը։ Այդքա՞ն մարդ Հազարաձորում, որտեղ այժմ համարյա ոչ ոք չկա։ Այդ մարդիկ արդեն կան, նրանք կան Գառնիում և կան հարևան գյուղերում, տարեցտարի բազմանում են, սակայն հնարավորությունները մնում են նույնը։ Հողի սեփականաշնորհման ժամանակ բաժին չստացած պատանիները մի քանի տարի հետո կդառնան ընտանիքավոր երիտասարդներ։ Այդ երիտասարդներին, նորաստեղծ ընտանիքներին, պետք է հնարավորություն տալ հավաքվելու նոր հողերի վրա, դառնալու նոր բնակավայրերի բնակիչները և նրա ապագա ֆերմերները։

Ինչ խոսք, ամեն ինչ հեշտ է գրել, քան իրագործել։ Մինչ Հազարաձորի հողերի յուրացումը անհրաժեշտ կլինի սոցիալական որոշակի ծրագրի կենսագործում։ Նախ՝ ճանապարհները։ Գառնիից մինչև Հազարաձոր 10—15 կիլոմետր բարեկարգ ճանապարհ ունենալու հարց է և միայն այդքան։ Մյուս հարցը, այդ բնակավայրերի էլեկտրաֆիկացումն է, բնակավայրերի նախագծումը՝ գիտական և տնտեսական խիստ հաշվենկատ ծրագրով։

Այսօր Գառնիում ապրում են մարդիկ, ովքեր ունեն Ազատ գետի վրա մի քանի էլեկտրակայան կառուցելու գործնական ծրագրեր։ Զուգահեռաբար այդ հարցի լուծումը կազատի հանրապետության ճգնաժամի մեջ գտնվող էլեկտրաէներգիայից մաս հանել Հազարաձորի ապագա ավանի բնակիչներին։

Կա հո՛ղ, ջո՛ւր, կլինի և էներգիայի սեփակա՛ն միջոց։

Տարիներ շարունակ ծեծվող այս հարցը լուծման կարոտ է։ Ասում են, թե Խոսրովի արգելանոցի հարևանությամբ ավան կամ արտադրություն ունենալը կարող է վտանգել արգելանոցի ապագան։ Բայց ինչպես էր հանդուրժվում Բայբուրդի օտարազգի գյուղի ներկայությունը, որի մի քանի տասնյակ ընտանիքներ յուրացնում էին նախկին տասնյակ վերաբնակեցված հայկական գյուղերի բարիքները և նաև՝ այսօր այդ անմարդաբնակ տարածքն ավելի շատ չէ՞ ենթարկվում ապականությունների, քան եթե այնտեղ հողի տեր և տնօրեն լինի։

Բայց գուցե՞ կա և մեկ այլ տարբերակ. գուցե մեր գիտնականները կասեն իրենց խոսքը։ Այսօր Գառնիում ամեն մի թիզ հող ու այգի կռվախնձոր է դարձել. մարդիկ, նույնիսկ հարազատներ, թշնամացել են իրար հետ՝ սեղմված «գյուղի հողային քարտեզի» սահմաններում։ Այդ սահմանները անհրաժեշտ է վերացնել, բացել։ Դա հասունացած հարց է։ Իսկ տարբերակը թողնում ենք իշխանությունների որոշմանը։

ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կենսաբանական գիտությունների բաժանմունքը, համաձայն ՀՀ ԳԱԱ կանոնադրության, հայտարարում է մրցույթ՝ կենսաքիմիայի, Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի, ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտների տնօրենների թափուր տեղերի համար։

Թեկնածուների հիմնավորված առաջադրումը մեկ ամսվա ընթացքում ուղարկել հետևյալ հասցեով՝ 375019, Երևան—19, Մարշալ Բաղրամյան պողոտա 24, կենսաբանական գիտությունների բաժանմունք։

ՀՀ ԳԱԱ կենսաբանական գիտությունների բաժանմունք

⁂

ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը հայտարարում է մրցույթ «Ազոտի, հազվագյուտ և ցրված տարրերի կորզման քիմիայի և տեխնոլոգիայի» լաբորատորիայի վարիչի թափուր տեղի համար։ Մրցույթին կարող են մասնակցել այդ բնագավառում գիտական աստիճան ունեցող անձինք։

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 1 ամիս, հայտարարության հրապարակման օրվանից։

Դիմումները անհրաժեշտ է փաստաթղթերով ներկայացնել հետևյալ հասցեով՝ Երևան—51, Ֆիոլետովի փող. 2-րդ նրբանցք, № 10, ԸԱՔԻ, գիտական քարտուղարին։ Հեռախոս՝ 23-00-69։

⁂

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքը հայտարարում է մրցույթ՝ Հ. Աճառյանի անվան լեզվի և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտների տնօրենների թափուր պաշտոնների համար։

Թեկնածուների առաջադրման վերաբերյալ առաջարկները անհրաժեշտ է մեկ ամսվա ընթացքում (հրապարակման օրից) ներկայացնել հետևյալ հասցեով՝ Երևան—19, Մարշալ Բաղրամյան պող., 24, 34 սենյակ, փիլիսոփայության և բանասիրության բաժանմունք։

Տեղեկությունների համար զանգահարել՝ 52-52-71, 27-92-91։

ՀՀ ԳԱԱ ՓԲԲ

ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՎ ՏՊԱԳՐՎԱԾԻՆ

Հարգելի խմբագրություն.

«Նպատակի» 5-րդ համարում ինձ շատ հետաքրքրեց «Դեպի մանկան սիրտ՝ առանց վիրադանակի» հոդվածը՝ մոսկվացի հայ բժիշկ Բագրատ Ալեքյանի վիրաբուժական հետաքրքիր մեթոդի մասին։ Դա նորություն է բժշկության բնագավառում և մարդասիրական մեծ գործ, քանի որ հազարավոր երեխաներ մի քանի օրական հասակից կփրկվեն ամբողջ կյանքում իրենց հետապնդող սրտային արատից։ Շնորհակալություն այդ հոդվածի համար։ Նամակիս նպատակը հետևյալն է. իմ և հարևաններիս անունից խնդրում եմ, եթե ունեք հնարավորություն, ավելի մանրամասն պատմեք Բ. Ալեքյանի փորձի մասին։

Ջուլիետա ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Երևան, Արարատյան զանգված

Հարգելի Ջ. Եղիազարյան.

Կատարելով ձեր խնդրանքը, այսօր «Նպատակը» նորից անդրադառնում է նույն հարցին, որքան հնարավոր է ավելի մանրամասն պատմելով Բագրատ Ալեքյանի և Բակուլևի անվան սրտանոթային վիրաբուժության հիվանդանոցի մասին, ստորև հրապարակվող հոդվածով։

ԲԱԿՈՒԼԵՎՅԻՆԵՐԸ ՓԱՐԻԶՈՒՄ ԵՎ ՏԱՆԸ

Բժշկական գիտությունների դոկտոր Բագրատ Ալեքյանը ղեկավարում է Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի Ա. Ն. Բակուլևի անվան սրտանոթային վիրաբուժության ինստիտուտի ռենտգենավիրաբուժական բաժանմունքը։

1993 թվականին Փարիզում կայացած համաժողովին ներկայացրած այդ ինստիտուտի 7 զեկուցումները ցնցեցին ողջ աշխարհը։ Նրանք նվիրված էին երեխաների սրտի բնածին արատներին ու բուժման նոր մեթոդներին։ Այդ գործով բաժանմունքի գիտնականներն զբաղվել են մոտ 9 տարի և նախկին ԽՍՀՄ-ում Ալեքյանն ու իր գործընկերներն առաջինն էին, որ համարձակվեցին ձողախողովակով թափանցել նորածնի (նույնիսկ մի քանի ժամվա ծնված) սիրտը։ Ռենտգենավիրաբույժների խիզախությունը պսակվեց հաջողությամբ։ Այդ տարիների ընթացքում փրկվեցին ավելի քան 100 մանուկներ։ Եվ այդ վիրահատությունը կատարվում է առանց վիրադանակի։

Ինստիտուտի բաժիններից մեկը՝ մինչև մեկ տարեկան երեխաների անհետաձգելի վիրաբուժության և ինտենսիվ թերապիայի բաժանմունքը, միակն է ողջ Ռուսաստանում, և զարմանալի չէ, որ բավական շատ են այդ բաժանմունքի փոքրիկ հիվանդները, որոնք տառապում են ի ծնե սրտի արատներով՝ սրտի զարկերակի փականների ցավով և զարկերակի արատով։ Նման դեպքերում վիրահատությունն անխուսափելի է։ Հինգ տարուց ավելի է, ինչ նորածիններին կատարում են «չվնասող» վիրահատություն, այսպես կոչված՝ գնդանոթային վալվուլոպլաստիկա։ Հենց այդ եզակի վիրահատության մասին էր, որ պատմեց Բ. Ալեքյանը Փարիզի գիտաժողովում։

Գրականության տվյալներով, նման արատի վիրահատության ավանդական մեթոդի շուրջ 40 տոկոսն առաջացնում էր բարդություններ, հիվանդների մոտ առաջանում էին թրոմբոզներ։ Ինչպես խուսափել դրանից, գտնել ավելի կարճ ճանապարհ՝ դեպի սիրտը։ Հայտնի է, որ սրտի ձողախողովակային բուժման ժամանակ բացում են աջ թիակատակի երակը։ Իսկ ինչո՞ւ չօգտագործել հենց այդ ուղին,— ինքն իրեն հարցրեց Բ. Ալեքյանը և փորձեց։ Պարզվեց, որ դա շատ հարմար ուղի է։ Այդպես գտնվեց նաև դեպի նորածնի սիրտը մուտք գործելու բուկլեզային նոր միջոցը. մերկացվում է աջ թիակատակի երակը, վիրակապվում է նրա վերջնամասը և ձողախողովակը մտցվում է մայր երակի մեջ ամենակարճ ճանապարհով։ Այնուհետև ամեն ինչ ընթանում է սովորական սխեմայով։ Ճնշումը չափելուց և շնչերակագրանցումից հետո փորձ է արվում անցնել զարկերակի փականի նեղ միջանցքով։ Այս գործում անհրաժեշտ են ոչ միայն մանրավիրաբուժական հատուկ գործիքներ, այլև վիրաբույժի գերզգայուն մատները։

Հաջորդ փուլը ընդարձակումն է։ Ձողախողովակի բալոնը 1—2 մմ փոքր պետք է լինի անցքի տրամագծից։ Հինգ-տասը վայրկյան անց, փոքրիկ պլաստիկ շարժումներից հետո վիրահատությունն ավարտված է։

Ստուգիչ հետազոտություններից հետո թիակատակի երակի բաց ծայրը վիրակապվում է։ Թեև այդ երակը դուրս է մնում արյան շրջանառությունից, բացասական հետևանքներ այն չի ունենում, և վիրահատությունն ավարտվում է առանց վնասելու աջ ձեռքը սնուցող թիակատակի զարկերակը։

Նոր մեթոդիկայով դեռ քիչ վիրահատություն է կատարված. 12 նորածինների կյանք է փրկվել, նորածիններ, որոնք գտնվում էին ծայրաստիճան վատ վիճակում։

Առավել արդյունավետ ու ակտիվ է գործում բալոնային պլաստիկ շարժումների մեթոդը շնչերակի նեղացման ժամանակ։ Մեթոդիկան լավ մշակված է, ճշտված են մանրուքները։ Սակայն, երբ վիրասեղանին է մի քանի օրական, նույնիսկ ժամի կյանք ունեցող մանուկը, ցանկացած շարժում և գործողություն իրոք եզակի է։

Բ. Ալեքյանը փորձով համոզվեց, թե որքան պատասխանատու է ընդարձակման ընթացքը երեխաների մոտ։ Անցքը շատ փոքր է և ընդարձակման ընթացքը պետք է տևի 7—10 վայրկյան։ Հակառակ դեպքում սիրտը միանգամից կարող է կանգնել։ Այսպես՝ մի քանի բալոնային ընդարձակումները, և ձողախողովակը հեռացվում է։

Բաժանմունքում կատարվել են շնչերակի նեղացման 42 վիրահատություններ։ Հիվանդները 2 օրականից մինչև 12 ամսական էին։

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որքան մեծ է երեխան, այնքան դյուրին է և արդյունավետ նրա վիրահատությունը։ Սակայն Բ. Ալեքյանն այն համոզման է, որ որքան շուտ վերացվի արատը, այնքան առողջ և աշխատունակ կլինեն հետագայում սրտի մկանները։

Վիրաբուժության նոր մեթոդն ունի դժվարություններ. թեև եղած տեխնիկայով (խոսքն առաջին թին ձողախողովակի մ է), հնարավոր է հաջո թյամբ լուծել չափահա րի վիրահատությունը, կայն նորածինների հա անհրաժեշտ են հա ոսկերչի գործիքներ, ո չկան։

«ՄԻԹԵ Ռուսաստանում նման վիրահատություն կատարում»,— այս հ լսել է Ցյուրիխում Բ. Ալ յանը՝ սրտանոթային րաբուժության միջազգային գիտաժողովի ժամանակ։ Նման տեխնիկական նվաճումներ համարության րում, զարմացել էին րիկացիները։

Մենք աշխատ հարկե, ցավալի է կան անգամ այս լսել և գիտակցել սահմանում։ Բայց Աստծո, որ այդ թյունը միայն գի ների նյութականին է բաբերում։ Մենք պետք ուրախանանք, որ շրջապատում կան զանդներ, ովքեր դժվարություններին, մտահոգություններն ու տերը հասցնում են ավարտ, ի սպաս ղովրդի առողջությանը։

Տնօրեն՝ Լավրենտի ԲԱՐՍԵՂՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ Ռաֆայել ՂԱԶԱՆՋՅԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.
Խիկար ԲԱՐՍԵՂՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ), Գալուստ ԳԱԼՈՅԱՆ, Գևորգ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ, Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ), Լորիս ՔԱԼԱՇՅԱՆ։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ, Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 բ, հեռախոս՝ 22-44-26։
Դասիչ՝ 69238։ Գրանցման վկայական 312։

Թերթը տպագրվել է ՀՀ կառավարության «Պարբերական» հրատարակչությունում։ Հասցեն՝ Արշակունյաց 2։ Ստորագրված է 12.04.1994 թ.